ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԾՐԱԳԻՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2021

Ծրագիրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՄՆ «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից:

Հեղինակային խումբ՝

Նաիրա Ղումաշյան
Աստղիկ Բալայան
Վարսենիկ Հովսեփյան
Նարինե Մնացականյան
Վեներա Խաչատրյան
Տաթև Մարաբյան
Իզաբելա Աբրահամյան
Ալբինե Ազատյան

Խմբագիր և սրբագրիչ

Բանասիրական գիտությունների թեկնածու՝ Նաիրա Ղումաշյան

Մեթոդական ուղեցույցը նախատեսված է «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագիրն իրականացնող հանրակրթական դպրոցների մանկավարժական աշխատողների համար, ովքեր ընդգրկվում են ընթերցանության զարգացման աշխատանքներում:

Ուղեցույցում նկարագրված են ծրագրի և աշխատանքների կազմակերպման բովանդակությունը, մեթոդիկան, իրականացնողների գործառույթները և համագործակցությունը: Այն օգտակար կարող է լինել ոչ միայն տարրական դպրոցում, այլև հանրակրթության մյուս աստիճաններում՝ ընթերցանության զարգացման աշխատանքներ կազմակերպելիս:

Բովանդակություն

1. Ներածություն 4
2. Ծրագրի նպատակները 5
3. Ակնկալվող վերջնարդյունքները..... 5
4. Աշխատանքների բովանդակությունը և իրականացման համառոտ նկարագիրը 7
   - ➢ Դասարանային աշխատանքներ: Դասարանային աշխատանքների կազմակերպման ռեսուրսներ..... 9
   - ➢ Արտադասարանային աշխատանքներ: Արտադասարանային աշխատանքների կազմակերպման ռեսուրսներ..... 38
5. Ծրագիրն իրականացնողների գործառույթները և համագործակցությունը ... 41
   - Տնօրենի գործառույթները 41
   - Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի գործառույթները ... 42
   - Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի գործառույթները..... 43
   - Դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի գործառույթները 43
   - Տարրական դպրոցի մեթոդմիավորման նախագահի գործառույթները 44
   - Տարրական դասարանների ուսուցչի գործառույթները 45
   - Դպրոցի գրադարանավարի գործառույթները և աշխատանքի կազմակերպումը 45
   - Ծնողների հետ համագործակցությունը 55
6. Հավելված. տարեկան աշխատանքային օրացույց..... 62
7. Օգտագործված գրականություն..... 74

1. Ներածություն

Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր կարևորագույն հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի և ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը, ինչի արդյունքում դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման և ուսումնառության ընթացքում: Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունքներ:

«Ընթերցանության օգտավետության մասին» զրույցում ժամանակակից փիլիսոփա Անդրեյ Բաումեյստեյրը նշում է. «Տեսողական ինֆորմացիան ուղեղը պասիվ է ընկալում, այն վերլուծական հմտություն չի պահանջում: Ինչպես գիտենք, տեքստը սիմվոլների հավաքածու է. երբ կարդում ենք տեքստը, ըստ էության, մեր ուղեղը վերծանում է այն. տառերից՝ բառ, բառերից՝ նախադասություն, որից հետո մենք կարդացածը իմաստավորում ենք, ինչի հետևանքով ուղեղը ահռելի ակտիվ աշխատանք է կատարում, ինչը մղում է ուղեղի զարգացման, հետևաբար՝ մարդու զարգացման: Որքան էլ ընթերցումը համարեն հնացած սովորություն, տեղեկություն ստանալու աղբյուրներ դիտարկվեն տեսանյութը, ձայնագրությունները, համացանցը, միևնույնն է, ընթերցանությունը ուղեղը մարզելու, կոփելու եզակի, լավագույն միջոցներից է»[1]:

Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից:

Տարրական դպրոցում ընթերցանության խրախուսման համար նախատեսված միջոցառումները, ըստ իրականացման ձևաչափի, պայմանականորեն բաժանված են 2 բաժինների՝ դասարանային և արտադասարանային:

Դասարանային աշխատանքները կապված են մայրենիի առարկայական բովանդակության և նպատակների հետ: Դրանք ընդգրկվում են առարկայական տարեկան թեմատիկ պլանավորման մեջ և առաջարկվող ժամանակացույցով իրականացվում են դասերի ընթացքում: Արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են դասարանային աշխատանքներին զուգահեռ՝ դպրոցից դուրս, կամ ընթերցանության խմբակի ձևաչափով՝ շաբաթական առնվազն 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ ծավալով: Խմբակը կարող է ղեկավարել գրադարանավարը, հայոց լեզվի և գրականության ուսուցիչը կամ դասվարը:

[1] Почему чтение важно. Cowo.книги. Андрей Баумейстер.

Սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման դասարանային և արտադասարանային աշխատանքները պետք է հանգամանորեն պլանավորվեն, իրագործվեն հետևողականորեն, ունենան աստիճանական ձևով զարգացող բնույթ և փոխլրացնեն իրար:

2. Ծրագրի նպատակները

1. Հանրակրթության տարրական աստիճանում սովորողների ընթերցանության որակի բարելավում:
2. Սովորողների մեջ ընթերցողական և լեզվական գրագիտության կարողունակությունների ձևավորում և զարգացում:
3. Ընթերցանության և խոսքի մշակույթի որակի բարելավմամբ հանրակրթական բոլոր առարկաների յուրացման արդյունավետության բարձրացում:
4. Ազգային և համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ընթերցանության միջոցով համամարդկային ու ազգային արժեքների դաստիարակում:

3. Ակնկալվող վերջնարդյունքները

Տարրական դպրոցում ընթերցանության որակի բարձրացման հիմք են «Հանրակրթության պետական չափորոշչում» (ՀՊՉ) ամրագրված հետևյալ պահանջները.

Տարրական դպրոցի սովորողը պետք է կարողանա՝

1. լսել, հասկանալ իրեն ուղղված խոսքը, համապատասխան արձագանք տալ լսածին՝ արտահայտելով իր կարծիքը կամ վերաբերմունքը.
2. հասկանալով և արտահայտիչ ընթերցել արձակ և չափածո գրական տեքստեր, արտահայտել մտքեր ենթատեքստի, հերոսների, նրանց մտքերի, խոսքի, արարքների վերաբերյալ՝ կիրառելով տեքստի բառերն ու արտահայտությունները.
3. ձևակերպել հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ, պատասխանել իրեն ուղղված հարցերին.
4. տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրել լսածը, ընթերցածը, դիտածը, նկարագրել տարաբնույթ երևույթներ, ցույց տալ դրանց փոխկապակցվածությունը.
5. արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը, զգացումները, ցանկությունները, մասնակցել զրույցի և քննարկման, հանդես գալ փաստարկված խոսքով.
6. արտահայտիչ արտասանել (կամ կարդալ) բանաստեղծություններ, արձակ հատվածներ, պատմել պատմություններ, հեքիաթներ, առակներ՝ շեշտադրելով հիմնական գաղափարը կամ ուղերձը և բացատրել՝ ինչպես է այն փոխանցվում տեքստի միջոցով.

7. մի քանի նախադասությամբ գրել իր տպավորությունները և վերաբերմունքը ընթերցած ստեղծագործության, նկարի, երաժշտության, ներկայացման, կինոնկարի մասին, կազմել գովազդային հոլովակի պարզ տեքստ, հայտարարություն, հրավիրատոմս, բացիկ.
8. իր հույզերն ու մտքերը արտահայտել ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, հասկանալ մարդուն, նրա հույզերը՝ հետևելով նրա շարժումներին, դեմքի արտահայտությանը, մարմնի դիրքին, դրսևորել համապատասխան վարքագիծ.
9. ձևակերպել հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ, ուսումնասիրել տպագիր և էլեկտրոնային պաշարներ՝ հարցերի պատասխանները գտնելու նպատակով.
10. հորինել պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ և միջոցներ (նկարապատում, ծաղրանկար և այլն), մասնակցել խմբային խոսք հորինելու գործընթացին.
11. ըստ տեքստի ստեղծել պաստառ, գրքույկ, սահիկաշար և այլն:

4. Աշխատանքների բովանդակությունը և իրականացման համառոտ նկարագիրը

Միջոցառումների օրացույց տարրական դպրոցի համար

Աշխատանքի ձևաչափը	N	Միջոցառման անվանումը և համառոտ բնութագիրը	Կատարման ժամկետը/ամիսները									
			Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Պատասխանատու
Արտադասարանային	1.	Արտահայտիչ ընթերցանության/ասմունքի մրցույթ										ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ուսուցիչ
	2.	Հեքիաթի բեմականացում										ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ուսուցիչ
	3.	Ընթերցած գրքի քննարկում										Գրադարանավար
	4.	Փոքրիկ հոլովակի պատրաստում կարդացած գրքի մասին										Ուսուցիչ
	5.	Ընթերցանության շաբաթի կազմակերպում										ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ուսուցիչ
	6.	Կարդացած գրքերի փոխանակման խաղ. կարդա՛, փոխանցի՛ր, զարգացի՛ր										Գրադարանավար
	7.	Խաղ-վիկտորինա ընթերցած գրքի շուրջ										Գրադարանավար, ուսուցիչ

Դասարանային	8.	Կարդացած գրքի էջերի ամենօրյա նշման գրքույկի ստեղծում և ընթերցանության մշտադիտարկում		Ուսուցիչ
	9.	Կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացում ամեն ամսվա ընտրված դասին		Ուսուցիչ
	10.	Կիսամյակի ընթացքում կարդացած գրքի ներկայացում՝ նկարազարդումների միջոցով		Ուսուցիչ
	11.	Նկարազարդ գրքույկների շնորհանդեսի և ցուցահանդեսի կազմակերպում կիսամյակի վերջում		Ուսուցիչ
	12.	Կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին		Ուսուցիչ
	13.	Դասը վարում է գրողը. ամեն կիսամյակում՝ գրական հանդիպում ժամանակակից գրողների հետ		Ուսուցիչ
	14.	Ընթերցանության տեխնիկայի ստուգում յուրաքանչյուր ամսվա վերջում		Ուսուցիչ, ուսումն. աշխատ. գծով տնօր. տեղակալ

❖ **Դասարանային աշխատանքներ**

Դասարանային միջոցառումները կազմակերպվում և իրականացվում են մայրենիի դասավանդման ընթացքում՝ ուսուցչի կողմից, և վերահսկվում են մասնախմբի նախագահի և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից: Ուսուցիչը ընթերցանության խրախուսմանն ուղղված աշխատանքները ներառում է թեմատիկ և օրվա դասի պլանավորման մեջ՝ հաշվի առնելով նաև տվյալ դասարանի սովորողների կարիքները:

- **Կարդացած գրքի էջերի ամենօրյա նշման գրքույկի ստեղծում և ընթերցանության մշտադիտարկում:** Այս տիպի գրքույկը կարելի է վարել ոչ միայն թղթային տարբերակով, այլև՝ էլեկտրոնային: Գրքույկում նշվում են սովորողների անունները, կարդացվող գրքերի վերնագրերը, դրանց էջերի քանակը, ընթերցվող էջերի ամենօրյա քանակը, ավարտելու ժամկետի մասին նշումներ: Ընթերցանության ընթացքը և նշագրումները ամեն դասից առաջ կամ հետո, հնարավոր է՝ դասի ընթացքում, մշտադիտարկվում են ուսուցչի կողմից: Նշագրումներ կարող են անել նաև սովորողները՝ յուրաքանչյուրն իր էջում, իսկ ուսուցիչը օրվա վերջում ստուգում է, հետադարձ կապ տալիս:
- **Կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացում ամեն ամսվա ընտրված դասին:** Ուսուցչի ընտրությամբ սովորողները ամեն ամսվա վերջին շաբաթվա վերջին դասին ներկայացնում են իրենց ընթերցած գրքից դուր եկած հատվածների կամ մտքերի ծաղկաքաղը և քննարկում ընկերների հետ:
- **Կիսամյակի ընթացքում կարդացած գրքի ներկայացում՝ նկարազարդումների միջոցով:** Այս աշխատանքը նախընտրելի է կազմակերպել ոչ բոլորի համար և ոչ պարտադրաբար, քանի որ նկարելու ձիրք բոլորը չէ, որ ունեն: Նկարազարդումների փոխարեն կարող են ընտրել պատրաստի նկարներ կամ նկարազարդումներ, որոնց համադրությամբ կարելի է ներկայացնել ստեղծագործությունը: Հնարավոր է նաև խմբով կամ զույգերով աշխատել, եթե նույն գիրքն են ներկայացնում:
- **Նկարազարդ գրքույկների շնորհանդեսի և ցուցահանդեսի կազմակերպում:** Այս աշխատանքը կարելի է կազմակերպել իբրև գործնական աշխատանքի տեսակ:
- **Կարդացած գրքի օր՝** յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին: Սովորողները հանդես են գալիս համառոտ հաշվետվություններով, ուսուցիչը ամփոփում է ընթերցանության նշումների գրքույկի և ամենօրյա մշտադիտարկումների արդյունքները:
- **Դասը վարում է գրողը. ամեն կիսամյակում՝ գրական հանդիպում ժամանակակից գրողների հետ:** Կարևոր է, որ սովորողները անմիջական շփում ունենան ժամանակակից գրողների հետ, լսեն, ճանաչեն նրանց, կարդան ստեղծագործությունները, կարծիքներ արտահայտեն:
- **Ընթերցանության տեխնիկայի ստուգում յուրաքանչյուր ամսվա վերջում:** Ընթերցանության տեխնիկան անհրաժեշտ է ստուգել ամեն ամսվա վերջում՝ դրան հատկացնելով որոշակի ժամաքանակ: Ստուգման արդյունքում սովորողին պետք է հետադարձ կապ տալ՝ ձևավորող գնահատմամբ:

Բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգման սանդղակաշար[2]. 1-ին դասարան (2-րդ կիսամյակի վերջում)

	Ստուգման չափանիշը	Ա մակարդակ	Բ մակարդակ	Գ մակարդակ
1.	Ընթերցանության արագությունը	Կարդում է 1 րոպեում (անցած տառերի շրջանակում) մինչև 25 բառ, նաև՝ վանկերով:	Կարդում է 1 րոպեում (անցած տառերի շրջանակում) մինչև 40 բառ, հիմնականում՝ ամբողջական բառերով:	Կարդում է 1 րոպեում (անցած տառերի շրջանակում) ավելի քան 40 բառ՝ ամբողջական բառերով:
2.	Ընթերցանության ընկալումը	Հիմնականում ընկալում է կարդացածի իմաստը, բայց հաճախ դժվարանում է ապահովել տրամաբանական դադարները, դա անում է ուսուցչի օգնությամբ:	Գրեթե ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, մեծ մասամբ ապահովում է տրամաբանական դադարները՝ երբեմն դա անելով ուսուցչի օգնությամբ:	Ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, ապահովում է տրամաբանական դադարները:
3.	Ընթերցանության ճշգրտությունը	Բառերը հիմնականում կարդում է ճիշտ, բայց հաճախ կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ և անսխալ՝ առանց ուսուցչի ուղղորդման և օգնության:

[2] Հիմքը՝ Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Առաջադիմության միավորային գնահատում (Մայրենի, 2- 4-րդ դասարաններ):

4.	Ընթերցանության արտահայտչականությունը	Ոչ միշտ է կարդում արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Դժվարությամբ է առանձնացնում տրամաբանական շեշտադրումները՝ նույնիսկ ուսուցչի միջամտությամբ: Թույլ է տալիս առոգանության խախտումներ:	Կարդում է հիմնականում հստակ, արտահայտիչ՝ մեծ մասամբ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Առանձնացնում է տրամաբանական շեշտադրումները, սակայն դա անում է ուսուցչի որոշակի միջամտությամբ:	Կարդում է անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Հստակ առանձնացնում է տրամաբանական շեշտադրումները՝ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան:
5.	Ընթերցանության սահունությունը	Կարդում է ոչ այնքան սահուն և առանց դժվարության, բառերը արտասանում է հստակ, բայց՝ կրկնելով կամ կմկմալով:	Կարդում է բավականին սահուն, առանց դժվարության, բառերը հիմնականում արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:

Բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգման սանդղակաշար. 2-րդ դասարան (2-րդ կիսամյակի վերջում)

	Ստուգման չափանիշը	Ա մակարդակ	Բ մակարդակ	Գ մակարդակ
1.	Ընթերցանության արագությունը	Ճիշտ կարդում է հիմնականում վանկերով, երբեմն՝ ամբողջական բառերով, որպեսզի՝ առնվազն 35 բառ, թույլ է տալիս չարդարացված դադարներ, սակայն ուսուցչի օգնության դեպքում էլ դժվարությամբ է ուղղում սխալները: Լուռ ընթերցանության արագությունը՝ որպեսզի մինչև 45 բառ:	Կարդում է ոչ այնքան հստակ, ամբողջական բառերով, ճիշտ կարդում է վանկերով, որպեսզի՝ առնվազն 45 բառ արագությամբ, երբեմն թույլ է տալիս չարդարացված դադարներ, բայց օգնության դեպքում ուղղում է սխալները: Լուռ ընթերցանության արագությունը՝ որպեսզի մինչև 55 բառ:	Կարդում է հստակ, ամբողջական բառերով: Կարդալու արագությունը՝ որպեսզի 50 բառից ոչ պակաս: Անհրաժեշտության դեպքում ինքն ուղղում է թույլ տված սխալները: Լուռ ընթերցանության արագությունը՝ որպեսզի մինչև 70 բառ:
2.	Ընթերցանության ընկալումը	Հիմնականում ընկալելով տեքստի բովանդակությունը՝ հաճախ կարդում է ոչ ճիշտ առոգանությամբ, բայց՝ տրամաբանական դադարներով:	Մեծ մասամբ ընկալելով տեքստի բովանդակությունը՝ կարդում է ճիշտ առոգանությամբ տրամաբանական դադարներով:	Ամբողջությամբ ընկալելով տեքստի բովանդակությունը՝ կարդում է առոգանական հնչերանգով և տրամաբանական դադարներով:
3.	Ընթերցանության ճշգրտությունը	Բառերը հիմնականում կարդում է ճիշտ, բայց հաճախ կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ և անսխալ՝ առանց ուսուցչի ուղղորդման և օգնության:

4.	Ընթերցանության արտահայտչականությունը	Կարդում է սխալներով, ոչ հստակ, ոչ միշտ՝ արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Դժվարությամբ է պահպանում բովանդակային դադարները, դժվարությամբ է առանձնացնում տրամաբանական շեշտադրումները՝ նույնիսկ ուսուցչի միջամտությամբ: Թույլ է տալիս առոգանության խախտումներ:	Կարդում է հիմնականում անսխալ, հստակ, արտահայտիչ՝ մեծ մասամբ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Պահպանում է բովանդակային դադարները, առանձնացնում է տրամաբանական շեշտադրումները, սակայն՝ ուսուցչի որոշակի միջամտությամբ:	Կարդում է անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Պահպանում է բոլոր բովանդակային դադարները, հստակ առանձնացնում է տրամաբանական շեշտադրումները՝ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան:
5.	Ընթերցանության սահունությունը	Կարդում է ոչ այնքան սահուն, առանց դժվարության, բառերը արտասանում է հստակ, բայց՝ կրկնելով կամ կմկմալով:	Կարդում է բավականին սահուն, առանց դժվարության, բառերը հիմնականում արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:

Բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգման սանդղակաշար. 3-րդ դասարան (2-րդ կիսամյակի վերջում)

	Ստուգման չափանիշը	Ա մակարդակ	Բ մակարդակ	Գ մակարդակ
1.	Ընթերցանության արագությունը	Կարդում է ամբողջական բառերով, որպեռում 40-54 բառ արագությամբ, առանձին դեպքերում անցնում է վանկային ընթերցանության: Թույլ է տալիս 5-ից ոչ ավելի սխալ, լուռ ընթերցանության արագությունը՝ որպեռում մինչև 60 բառ:	Ապահովում է սահուն, վարժ ընթերցանություն ամբողջական բառերով՝ բառակապակցությունների և բառերի խմբերի իմաստների ընկալմամբ: Պահպանում է կարդալու առոգանությունը, անհրաժեշտության դեպքում ուղղում է թույլ տված սխալները: Կարդում է որպեռում 55-59 բառ, լուռ ընթերցանությամբ՝ 70 բառից ոչ պակաս:	Ապահովում է սահուն, վարժ ընթերցանություն՝ ամբողջական բառերով՝ բառակապակցությունների և բառերի խմբերի իմաստների ընկալմամբ: Պահպանում է կարդալու արտահայտչականությունը, առանձնացնում իմաստային դադարները և հիմնավորում: Կարդում է որպեռում առնվազն 60 բառ, լուռ ընթերցանությամբ՝ 80-ից ավելի բառ:
2.	Ընթերցանության ընկալումը	Հիմնականում ընկալելով տեքստի բովանդակությունը՝ հաճախ կարդում է ոչ ճիշտ առոգանությամբ, բայց՝ տրամաբանական դադարներով:	Մեծ մասամբ ընկալելով տեքստի բովանդակությունը՝ կարդում է ճիշտ առոգանությամբ տրամաբանական դադարներով:	Ամբողջությամբ ընկալելով տեքստի բովանդակությունը՝ կարդում է առոգանական հնչերանգով և տրամաբանական դադարներով:
3.	Ընթերցանության ճշգրտությունը	Բառերը հիմնականում կարդում է ճիշտ, բայց հաճախ կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ և անսխալ՝ առանց ուսուցչի ուղղորդման և օգնության:

4.	Ընթերցանության արտա-հայտչականությունը	Կարդում է ամբողջությամբ, սակայն դժվարությամբ է առանձնացնում բովանդակա-յին դադարները, տրամաբա-նական շեշտադրումները՝ նույնիսկ ուսուցչի օգնության պայմաններում, միաժամանակ թույլ է տալիս առոգանության խախտումներ:	Կարդում է անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Հիմնականում պահպանում է բովանդակային դադարները, առանձնացնում է տրամաբա-նական շեշտադրումները, բայց հաճախ՝ ուսուցչի միջամտու-թյամբ:	Կարդում է անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսա-կան կանոնների պահպանու-մով: Պահպանում է բովանդակա-յին դադարները, առանձնաց-նում է տրամաբանական շեշտադրումները՝ ստեղծա-գործության բովանդակու-թյանը համապատասխան:
5.	Ընթերցանության սահունությունը	Կարդում է ոչ այնքան սահուն, առանց դժվարության, բառերը արտասանում է հստակ, բայց կրկնելով կամ կմկմալով:	Կարդում է բավականին սահուն, առանց դժվարության, բառերը հիմնականում արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:

Բարձրաձայն ընթերցանության տեխնիկայի ստուգման սանդղակաշար. 4-րդ դասարան (2-րդ կիսամյակի վերջում)

	Ստուգման չափանիշը	Ա մակարդակ	Բ մակարդակ	Գ մակարդակ
1.	Ընթերցանության արագությունը	Ճիշտ առոգանությամբ, ամբողջական բառերով կարդում է տեքստը, սակայն կարդալիս որոշ բառերում թույլ է տալիս անճշտություններ: Դերերով ընթերցանության ժամանակ երբեմն անուշադրություն է դրսևորում, դժվարանում է արտահայտիչ ընթերցելիս: Կարդում է րոպեում 70 բառ, լուռ ընթերցանությամբ՝ մինչև 90:	Ապահովում է ճիշտ, հասկանալով, արտահայտիչ ընթերցանություն՝ ուղղախոսական հիմնական կանոնների պահպանմամբ: Տիրապետում է տարբեր ժանրերի և ծավալների ստեղծագործությունները հասկանալով և դերերով կարդալու կարողությանը, բայց երբեմն դժվարանում է դերային ընթերցանության համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն այն հաղթահարում է ուսուցչի միջամտությամբ: Կարդում է րոպեում 90 բառ, լուռ ընթերցանությամբ՝ մինչև 110 բառ:	Ապահովում է ճիշտ, հասկանալով, արտահայտիչ ընթերցանություն՝ ուղղախոսական հիմնական կանոնների պահպանմամբ: Տիրապետում է տարբեր ժանրերի և ծավալների ստեղծագործությունները հասկանալով և դերերով կարդալու կարողությանը: Կարդում է րոպեում 90 բառ, լուռ ընթերցանությամբ՝ մինչև 110 բառ:
2.	Ընթերցանության ընկալումը	Հիմնականում ընկալելով տեքստի բովանդակությունը՝ հաճախ կարդում է ոչ ճիշտ առոգանությամբ, բայց՝ տրամաբանական դադարներով:	Մեծ մասամբ ընկալելով տեքստի բովանդակությունը՝ կարդում է ճիշտ առոգանությամբ տրամաբանական դադարներով:	Ընկալելով տեքստի բովանդակությունը՝ կարդում է առոգանական հնչերանգով և տրամաբանական դադարներով:

3.	Ընթերցանության ճշգրտությունը	Բառերը հիմնականում կարդում է ճիշտ, բայց հաճախ կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության:	Բառերը կարդում է ճիշտ և անսխալ՝ առանց ուսուցչի ուղղորդման և օգնության:
4.	Ընթերցանության արտահայտչականությունը	Կարդում է հիմնականում հստակ, արտահայտիչ: Պահպանում է բովանդակային դադարները, դժվարությամբ է առանձնացնում տրամաբանական շեշտադրումները՝ նույնիսկ ուսուցչի օգնության պայմաններում, միաժամանակ թույլ է տալիս առոգանության խախտումներ:	Կարդում է գրեթե անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Պահպանում է բովանդակային դադարները, առանձնացնում է տրամաբանական շեշտադրումները, բայց հաճախ՝ ուսուցչի միջամտությամբ:	Կարդում է անսխալ, հստակ, արտահայտիչ՝ ուղղախոսական կանոնների պահպանումով: Պահպանում է բովանդակային դադարները, առանձնացնում է տրամաբանական շեշտադրումները՝ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան:
5.	Ընթերցանության սահունությունը	Կարդում է ոչ այնքան սահուն, առանց դժվարության, բառերը արտասանում է հստակ, բայց՝ կրկնելով կամ կմկմալով:	Կարդում է բավականին սահուն, առանց դժվարության, բառերը հիմնականում արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու:

«Դասարանային աշխատանքներ» ենթաբաժնում ընթերցանությունը խրախուսող աշխատանքի ձևերի առաջարկվող շտեմարանն է, որից կարող է իր աշխատանքը պլանավորելիս և կազմակերպելիս օգտվել ուսուցիչը՝ ելնելով նպատակահարմարությունից, իսկ արտադասարանային աշխատանքների ենթաբաժնում արտադասարանային աշխատանքի կազմակերպման ձևերի առաջարկվող շտեմարանն է:

1. Դասարանային աշխատանքներ. Աշխատանքի կազմակերպման ձևերը դասակարգված են՝ ըստ նպատակադրման.

1.1. ընթերցածն ընկալելուն նպաստող և զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր,

1.2. ընթերցանության տեխնիկան շտկող ու զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր,

1.3. ընթերցանության արտահայտչականությունը զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր:

1.1. Ընթերցածն ընկալելուն նպաստող և զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

Զույգերով աշխատանք: Դասվարի հիմնական գործառույթներից մեկը եղած բոլոր միջոցներով սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման ապահովումն է նրացից յուրաքանչյուրի համար: Կարդացածը հասկանալը և վերլուծաբար տեքստի շուրջ աշխատելու կարողությունը հետագայում դառնում է գործիք՝ հիմնական դպրոցում որակյալ ուսումնառություն համար: Եթե դասվարը տարրական դասարաններում դասավանդում է գրեթե բոլոր առարկաները (մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, ես և շրջակա աշխարհը և այլն), նա պետք է պլանավորի այն բոլոր գործողությունները, որոնք իր դասարանում յուրաքանչյուր սովորողի կդարձնի հաջողակ ընթերցող և ակտիվ սովորող: Այդ իսկ պատճառով՝ դասվարն անընդհատ և շարունակաբար պետք է սովորողի ուսումնառության մեջ կիրառի զույգային աշխատանքի բոլոր ձևերը: Դրանք են՝

Ուսումնական նյութի համատեղ ուսումնասիրում (պարբերության ընթերցում, վերնագրում, նյութի պլանի կազմում),

Փոխուսուցում (երբ երեխաները իրար սովորեցնում են իրենց սովորածը՝ ըստ նախապես կազմած քայլերի),

Փոխստուգում (երբ երեխաները ստուգում են միմյանց կատարած քայլերը):

Փոխվարժանք (աշխատաձևը նախատեսված է անցած նյութի կրկնության և ամրապնդման համար):

Համատեղ քննարկում (ուսումնական նյութի որևիցե հարցի շուրջ միմյանց դիրքորոշումների, կարևոր հարցերի կամ անհասկանալի կետերի բացահայտում, քննարկում):

Աշխատանքային այս բոլոր ձևերը կարելի է ուսումնական գործընթացի ցանկացած փուլում նպատակային կիրառել: Պարզապես օրվա թեմաների պլանավորման մեջ

անհրաժեշտ է նախապես ընտրել տեղը (նոր նյութի ուսումնասիրություն, անցածի կրկնություն, ամփոփում և կշռադատում) և նախապատրաստել ուսումնական նյութերը (տեքստ, պարբերություն, հաշվառման աղյուսակ, հուշաթերթիկ, ստուգաթերթիկ, զույգով աշխատելու քայլաշար, առաջադրանք և այլն):

<u>Ա. Ուսումնական նյութի համատեղ ուսումնասիրում (պարբերության ընթերցում, վերնագրում, նյութի պլանի կազմում)</u>

Աշխատանքի կազմակերպում

Քայլ 1. Նախ՝ երեխաներին պետք է սովորեցնել, թե ինչպես տեքստի պարբերության վրա աշխատել զույգով: Դրա համար անհրաժեշտ է ընտրել դասագրքից ցանկացած տեքստի պարբերություն (ցանկալի կլինի, որ այն լինի պատմողական բնույթի և իր մեջ պարունակի կոնկրետ տեղեկատվություն):

Օրինակ՝ ***Աշխարհի բոլոր ծայրերից ամեն տարի զբոսաշրջիկներ են գալիս Հայաստան՝ զմայլվելու նրա գեղատեսիլ վայրերով և քաղցրահամ ու ջինջ ջրով: Նրանց ամենից շատ գերում են Հայաստանի հնագույն պատմությունը, եկեղեցիները, բերդերը, անուշահամ մրգերը և, իհարկե, Ջերմուկի և Բջնիի անմահական ու բուժիչ ջրերը:***

Քայլ 2. Բազմացնել տվյալ պարբերությունը խմբում աշխատող զույգերի քանակով (օրինակ, եթե 24 հոգի են, բազմացնել 12 օրինակից): Եթե բազմացման խնդիր կա, կարելի է դասագրքից բոլորի համար ընտրել մեկ պարբերություն, իսկ հարցերը գրել գրատախտակին:

Քայլ 3. Բաժանել բոլոր զույգերին միևնույն պարբերությունը: Այնուհետև հարցեր կազմել, որոնց սովորողները պատասխանելով, քննարկելով կյուրացնեն պարբերության բովանդակության իմաստը:

Օրինակ՝ 1. Ովքե՞ր են գալիս ամեն տարի Հայաստան և ի՞նչ են անում նրանք:
2. Ամենից շատ ի՞նչն է նրանց հետաքրքրում Հայաստանում:

Հարցերը ոչ թե ընդհանրական կամ փոխաբերական իմաստ պետք է ունենան, այլ լինեն պարզ, որոնք կօգնեն սովորողներին մանրամասն յուրացնել պարբերության իմաստը:

Քայլ 4. Հարցերին պատասխանելուց հետո առաջարկվում է համատեղ (զույգերով) վերնագրել պարբերությունը: Վերնագիրը պետք է արտահայտի տվյալ պարբերության իմաստը, այլ ոչ թե այն, թե կարդացողը ինչ է հասկանում: Վերնագիրը չպետք է լինի պարբերության համառոտագրությունը կամ պայմանական մի բառ, որով սովորաբար վերնագրում են պատմվածքը կամ վեպը: Վերնագրել կարելի ինչպես հարցի միջոցով, այնպես էլ հուշող բառերով: Օրինակ՝ այս պարբերությունը կարելի է վերնագրել հետևյալ կերպ՝ «Ի՞նչն է գերում Հայաստանում զբոսաշրջիկներին» կամ «Զբոսաշրջիկների այցելության նպատակը»:

Քայլ 5. Այնուհետև ուսուցիչը բոլոր զույգերի վերնագրերը գրում է գրատախտակին և սկսում է քննարկումը՝ ըստ պլանի հարցերի, որպեսզի հասկանան, թե ում

վերնագիրն է ճիշտ ընտրված և ինչու: Այսպես սովորողները ոչ միայն կարողանում են աշխատել զույգով պարբերության վրա, այլ նաև ճիշտ վերնագրել այն: Մի քանի անգամ նման աշխատանք կազմակերպելուց հետո, կարելի է արդեն դասագրքի ամբողջական տեքստերը հանձնարարել այդպես յուրացնել:

Քայլ 7. Անհրաժեշտ է պատրաստել այն նյութը, որի վրա երեխաները համատեղ պետք է ուսումնասիրեն զույգով: Նշվում է պարբերության սկիզբը և ավարտը: Տրվում են պարբերությունը պարզաբանող հարցերը:

Օրինակ՝ Կռունկը (Մայրենի 2, Վ. Ա. Սարգսյան)

I պարբերություն

Անտառապահ Սարգիսը……. Սարգիսը մոտեցավ նրան:

1. Ի՞նչ էր սիրում Սարգիսը:
2. Ի՞նչ աղմուկ լսեց նա:
3. Ի՞նչ մտածեց Սարգիսը:
4. Ի՞նչ եղավ կրակելուց հետո:

II պարբերություն

-Ձեռքս կոտրվեր …….սկսեց խնամել:

1. Ի՞նչ ասաց Սարգիսը:
2. Ու՞ր տարավ նա վիրավոր թռչունին:
3. Ո՞վ սկսեց խնամել թռչունին:

III պարբերություն

Սկզբում կռունկը ….. ընտելացավ բոլորին:

1.Ի՞նչ վիճակում էր սկզբում կռունկը:
2. Ի՞նչը նպաստեց կռունկի ընտելացմանը և կազդուրմանը:

IV պարբերություն

Ձմեռն անցավ …. Բաժանվեց նրանից:

1. Ի՞նչ եղավ գարնանային մի օր:
2. Ու՞մ տեսավ կռունկը և ի՞նչ արեց:
3. Ի՞նչ ասաց Նազենիկը հայրիկին:

Բ. <u>Փոխուսուցում.</u> երեխաները իրար սովորեցնում են իրենց սովորածը՝ ըստ նախապես կազմած քայլերի: Այս աշխատանքը նպատակահարմար է կիրառել քերականական և մաթեմատիկական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ:

Աշխատանքի կազմակերպում

Քայլ 1. Ուսուցիչն ուսուցանվող մեկ խոշոր թեմայից առանձնացնում է փոքր ուսուցանվող թեմաներ: Օրինակ՝ երկրորդ դասարանում երկնիշ թվերի գրառման, տասնավորներ և միավորներ թեմայի ուսումնասիրումից հետո

գալիս է երկնիշ թվերի համեմատումը, երկնիշ թվերի գումարումը և հանումը՝ առանց կարգային անցումների:

Քայլ 2. Կազմում է առաջադրանքներ նախապես որոշված թեմաների շուրջ:

Օրինակ՝ **Առ.1. Համեմատել տրված թվերը.**

ա) 35 * 23, 12 * 24, 23 * 13

բ) 28 * 28, 53 * 64, 17 * 71

Առ. 2. Գտնել գումարը.

ա) 21 + 12, 15 + 14, 24 + 32

բ) 25 + 10, 61 + 11, 81 + 14

Առ. 3. Գտնել տարբերությունը.

ա) 16 - 10, 55 - 31, 29 - 13

բ) 37 - 25, 85 - 61, 97 - 24

Քայլ 3. Առաջադրանքները կազմելուց հետո ուսուցիչը դասարանի տեսանելի վայրում փակցնում է հաշվառման աղյուսակ, որտեղ նշված են սովորողների անունները և առաջադրանքների քանակը:

Օրինակ՝

Անուն- ազգանուն	Առ. 1	Առ.2	Առ 3
Սովորող 1	.		+
Սովորող 2		⊕	.
Սովորող 3	+		.
Եվ այլք...			

. -ը նշանակում է, որ առաջադրանքը նոր են ստացել, և դեռ սովորելու փուլում է:

+ -ը նշանակում է, որ առաջադրանքի ինքնուրույն և անսխալ կատարվել է:

⊕ -ը նշանակում է, որ սովորողը առաջադրանքը սովորեցրել է իր ընկերներից մեկին:

Այս հաշվառման աղյուսակում սովորողներն իրենք են նշումներ կատարում: Սա առաջին հերթին սովորողին օգնում է դառնալ ավելի պատասխանատու, ինքնուրույն և ինքնակառավարվող:

Քայլ 4. Ուսումնական խումբը բաժանվում է 3 պայմանական խմբերի և յուրաքանչյուր խմբում բացատրում է առաջադրանքի կատարումը, թե ինչպես պետք է աշակերտներն իրենց ընկերներին բացատրեն տվյալ առաջադրանքը (մինչ ուսուցիչն աշխատում է մի խմբի հետ, սովորեցնում փոքրիկ նյութն ու բացատրում, թե երեխաներից յուրաքանչյուրը ինչպես պետք է աշխատի, ինչ քայլեր պետք է

իրականացնի զույգով աշխատանքում, մյուսներն անցած նյութերի շուրջ ինքնուրույն աշխատանք են կատարում մինչև ուսուցչի մոտենալն իրենց խմբին):

Քայլ 5. Առաջադրանքի **ա** խմբի օրինակները կատարում է սովորեցնողը սովորողի տետրում՝ բացատրելով, իսկ **բ** խմբի օրինակներն ինքնուրույն կատարում է սովորողը, որից հետո սովորեցնողը ստուգում է՝ արդյոք նա ճիշտ է կատարել: Առաջադրանքի ինքնուրույն մասը կատարելուց առաջ զույգով երկուսն էլ կատարում են իրենց սովորեցնողի դերը, փոխանակում առաջադրանքները և նոր միայն ինքնուրույն կատարում **բ** խմբի վարժությունները, որից հետո միմյանց ստուգում են: Եթե երկու սովորողն էլ ինքնուրույն բաժինը ճիշտ են կատարել, ապա համարվում է աշխատանքը զույգով ավարտված:

Գ. Փոխստուգում: Փոխստուգման զույգային աշխատաձևի հաճախակի և արդյունավետ կիրառումը կապահովի սովորել սովորելու կարողունակության հատկապես ինքնակազմակերպման կարողության և ժամանակի արդյունավետ կառավարման հմտության ձևավորմանը: Փոխստուգման աշխատաձևը նաև նպաստում է ինքնաստուգման հմտության ձևավորմանը: Սովորողները դառնում են ավելի կազմակերպված և պատասխանատու: Որքան սովորողի գործառույթը մանկավարժացնում ես, այնքան նա ավելի նպատակասլաց ու մոտիվացված է դառնում. բարձրանում է սեփական ինքնագնահատականը և ուրիշների նկատմամբ օբյեկտիվ գնահատման կարողությունը: Փոխստուգման զույգային աշխատաձևը նպատակահարմար է կիրառել դասի ցանկացած փուլում: Օրինակ՝ տարրական դպրոցի մայրենիի դասերը, հատկապես՝ առաջին և երկրորդ դասարաններում, գրեթե միշտ սկսվում են սովորողի բարձրաձայն ընթերցմամբ: Բարձրաձայն ընթերցման համար կարելի է նախապատրաստել հուշաթերթիկներ, այնպես, որ յուրաքանչյուր սեղանին լինեն:

Հուշաթերթիկի բովանդակությունը

1. Խնդրի՛ր ընկերոջդ բարձրաձայն (բայց՝ գրադարանային ձայնով) **ընթերցել դասանյութի մի հատվածը**: Հատվածը կարող է ընտրել ուսուցիչը կամ հենց սովորողը**:**

2. Հետևի՛ր, թե ինչպես է ընկերդ ընթերցում:

- Սահուն է ընթերցում:
- Առոգանությամբ է ընթերցում:
- Ընթերցում է ոչ սահուն:
- Ընթերցելիս բառեր է բաց թողնում:
- Արդյո՞ք ընթերցելիս պահպանում էր ցածրաձայն կարդալու կանոնը:

3. Քաջալերի՛ր ընկերոջդ:

4. Ասա՛ նրա ընթերցանության թերությունները, եթե այդպիսիք կան:

(Այս հուշաթերթիկը կարելի է կիրառել նաև այլ աշխատանքների կազմակերպման ժամանակ, ինչպես նաև փոփոխել հուշաթերթիկի բովանդակային քայլերը):

Քայլ 2. Ծանոթացնել հուշաթերթիկի բովանդակությանը: Շատ կարևոր է, որ դասվարը երեխաներին, իրենց համար մատչելի լեզվով, ներկայացնի զույգով կատարվելիք փոխստուգման աշխատանքները: Ներկայացումը բացի մատչելի լինելուց պետք է լինի հակիրճ և բովանդակալից: Սովորողներին անչափ ոգևորում է, որ իրենց տրվում են ինքնուրույն աշխատանքի համար հստակ հրահանգներ և նաև, որ իրենց վստահում են այդչափ «կարևոր» փոխստուգման գործընթացը: Ուսուցիչը նաև անպայման մատնանշում է ցածրաձայն ընթերցման կարևորությունը և խնդրում, որ սովորողներն անպայման պահպանեն խմբի կանոնները, որպեսզի աշխատանքային աղմուկը լինի տանելի:

Քայլ 3. Մինչ երեխաները զույգերով միմյանց ընթերցանությունն են լսում և մեկնաբանություններ անում ընկերոջ ընթերցածի շուրջ, ուսուցիչն այդ ընթացքում շրջում է դասարանով մեկ, մոտենում աշատանքային զույգերին, լսում և համապատասխան վերլուծություններ անում սովորողների աշխատաքների շուրջ (ընթացքում իր մոտ կատարում է նշումներ՝ առանձին աշակերտների հետ կապված):

Քայլ 4. Ընթերցանության փոխստուգման փուլին պետք է անպայման հաջորդի **հետադարձ կապը**: Պետք է նախ՝ քաջալերող խոսքերով սկսել՝ մատնանշելով երեխաների զույգային աշխատանքի կարևորությունը և արդյունավետությունը, լսել երեխաների անդրադարձն իրենց կատարած աշխատանքին, և թե ինչու են իրենք իրենց ընկերոջ ընթերցանությունը լավ կամ բավարար գնահատել: Կարելի է նաև նշել առանձին զույգերում տեղի ունեցած որակյալ աշխատանքը, այնուհետև՝ պարտադիր անդրադառնալ թերություններին: Շատ կարևոր է, որ թերությունների մասին խոսելիս ուսուցիչն ավելորդ հուզականություն չդրսևորի և օբյեկտիվ գնահատական տա թե՛ զույգային աշխատանքին և թե՛ սովորողների ընթերցանության որակին (առանձին աշակերտների դեպքում կարելի է հենց փոխստուգման ընթացքում անհատապես ապահովել հետադարձ կապ):

Դ. Փոխվարժանք: Փոխվարժանք զույգային աշխատանքը կարելի է կիրառել անցած նյութի կրկնության, ամրապնդման համար: Փոխվարժանքը կազմակերպվում է փոփոխական կազմով զույգային աշխատանքի միջոցով:

Մայրենիի դասընթացում նաև շատ կարևորվում է ուղղախոսությունը և ուղղագրությունը: Սովորողներն օգնում են միմյանց անգիր հիշել և վարժվել այն օրինակներին, որոնք նրանց հանձնարարել է ուսուցիչը: Նրանք իրար թելադրում են, միմյանց հարցնում, օգնում ճիշտ գուշակել պատասխանը, հետևում են՝ արդյոք ընկերը ճիշտ է կատարում իր բոլոր քայլերը:

Փոխվարժանքի կիրառումը ապահովում է մի շարք դրական կողմեր:

1.Յուրաքանչյուր սովորողին տրվում է հենց այն առաջադրանքը, որում ընտրված նյութին կա՛մ լավ չի տիրապետում, կա՛մ հաճախ մոռանում է, կա՛մ պարզապես դրա վարժեցման կարիքը կա:

2. Երեխաները հետևում են իրենց ընկերոջ կատարած քայլերին, որոնք ամբողջությամբ իր առաջադրանքում տրված են (այսինքն ուսուցչից մեծ ջանք չի պահանջվում այս

աշխատանքը կազմակերպեկու համար. միայն առաջադրանքի օրինակներ և հաշվառման աղյուսակ):

3. Միևնույն առաջադրանքով մի քանի անգամ տարբեր սովորողների հետ աշխատելիս աշակերտը, ի վերջո, ինքն է ամբողջությամբ յուրացնում այն (ի դեպ, նպատակը սա է, ոչ թե՝ փոխուսուցումը, որ սովորողը բազմակի անգամ կրկնի այն, ինչը անընդհատ մոռանում, թերանում է դրա կիրառման մեջ և այլն):

Քայլ 1. Ուսուցիչը նախապես ընտրված ուղղագրական բառերից կազմում է առաջադրանքներ: Ուղղագրական բառերը ընտրելիս կարելի է ուղղորդվել ոչ միայն թեմային հարմարեցնելով, այլ նաև ընտրել այն բառախումբը, որոնց գրության մեջ սովորողները շարունակաբար սխալներ են թույլ տալիս:

Օրինակ՝

Առաջադրանք 1.

Բարձր բար-ձըր

Ճանապարհ ճա-նապարհ, ճանա-պարհ

Աղբյուր աղբ-յուր

Առաջադրանք 2.

Խնդիր, խըն -դիր

Կարգապահ կար-գապահ, կարգա-պահ

Արդար ար- դար

Քայլ 2. Ուսուցիչը սովորողներին բացատրում է, թե ինչպես պետք է աշխատել առաջադրաքի վրա:

- Նախ՝ բարձրաձայն կարդում ես տրված բառը, խնդրում ընկերոջդ ճիշտ ասել թե՛ արտասանությամբ, թե՛ գրությամբ:
- Հետո առաջարկում ես, որ նա գրի այդ բառն իր տետրում, իսկ դու հետևում ես, թե արդյո՞ք ճիշտ է գրում նա:
- Առաջարկում ես, որ նույն բառը գրի տողադարձման հնարվոր բոլոր ձևերով:
- Այնուհետև իր առաջադրանքով նույն քայլերը քո ընկերն է իրականացնում:
- Զույգով աշխատանքը ավարտելուց հետո նշում ես կատարում հաշվառման աղյուսակում և աչքերով լուռ փնտրում ես մեկին, ով քեզ նման ավարտել է աշխատանքը և ձեռքով նշան անում, որ դու ևս ազատ ես:

Քայլ 3. Հաշվառման աղյուսակի կազմում: Հաշվառման աղյուսակը շատ պարզ է. և՛ ուղղահայաց, և՛ զուգահեռ գրվում են ուսումնական խմբի երեխաների անունները: Հիմնական իմաստը այն է, որ սովորողը իր առաջադրանքով ավելի շատ քանակով սովորողների հետ աշխատի: Արդյուքում նա յուրացնում է հենց իր առաջադրանքը, որն էլ փոխվարժանքի հիմնական նպատակներից է:

Անուն- ազգանուն	Սով. 1	Սով.2	Սով. 3	Սով. 4
Սով. 1	+	+	.	
Սով. 2		+		
Սով. 3	.		+	
Սով. 4	+	.		+
Եվ այլք				

Քանի որ աշակերտը ինքն իր հետ չի աշխատելու, նախապես իր իսկ դիմաց դնում եք + նշանը:

- -ը նշանակում է՝ զույգը նոր է սկսել աշխատել:
- + -ը նշանակում է, որ աշխատանքը զույգում ավարտվել է:

Հաշվառման աղյուսակը փակցվում է սովորողների համար տեսանելի և հասանելի տեղում, որպեսզի նրանք իրենք իրականացնեն համապատասխան նշումները: Նմանատիպ աշխատանքները սովորողների մեջ ձևավորում է ինքնակառավարման, ինքնավերահսկման կարողունակությունը:

Քայլ 4. Փոփոխական կազմով զույգային աշխատանքի համար որպես ավարտ կարելի է կարճ ժամանակի համար տրվող թեստային աշխատանք կազմակերպել հենց այդ բառեր շուրջ և ստուգել աշխատանքի արդյունքը, որից հետ համապատասխան վերլուծություն անել:

Ե. <u>Համատեղ քննարկում:</u> Համատեղ քննարկման զույգային աշխատանքը կարելի է կազմակերպել «Մայրենիի» կամ «Ես և շրջակա աշխարհի» այն ուսուցանվող տեքստերի շուրջ, որոնց մեջ պատմական ակնարկ կամ գիտական տեղեկատվություն կա: Համատեղ քննարկման զույգային աշխատանքը զարգացնում է սովորողների հետազոտելու, քննադատական մտածողության, վերլուծելու և սովորել սովորելու կարողունակությունները: Այն առավել նպաստում է հասկանալով և վերլուծաբար կարդալու կարողության զարգացմանը:

Քայլ 1. Ուսուցիչը նախապես ընտրում է նշված առարկաների բովանդակությունից այն ընթերցանության տեքստերը, որոնց շուրջ պետք է կազմակերպել աշխատանքը:

Քայլ 2. Կազմում է հուշաթերթիկ, որի օգնությամբ սովորողները զույգով իրականացնում են տեքստի քննարկումը (քննարկման ենթակա նյութերը արդեն իսկ ուսումնասիրվել են, և քննարկման աշխատանքը թույլ է տալիս ավելի խորը ընկալել և նրա շուրջ վերլուծական աշխատանք տանել):

Հուշաթերթիկի հրահանգները կարելի է և՛ պարզեցնել (կախված տարիքային առանձնահատկություններից կամ հմտություններից), և՛ փոփոխել հրահանգները՝ հարմարեցնելով տեքստի բովանդակությանը:

Հուշաթերթիկ

- Եվս մեկ անգամ ընթերցե՛ք նյութը:
- Ընդգծե՛ք այն կարևոր տեղեկատվությունը, որը սովորեցիք այդ տեքստից:
- Ըստ ձեզ՝ ինչու՞ է այն կարևոր, որտե՞ղ ձեզ պետք կգա ձեր սովորածը:
- Ընդգծե՛ք այն մասը, որը ձեզ համար անհասկանալի էր:
- Տեքստի ո՞ր մասի շուրջ կցանկանայիք ավելին իմանալ:

Բարձր դասարաններում հուշաթերթիկի կարիք միգուցե չի լինի, սակայն տարրական դպրոցում դրանք անհրաժեշտ են ինքնուրույն սովորելու, կողմնորշվելու և ինքնակազմակերպման նպատակով: Տարրական դպրոցում գրեթե բոլոր կարողությունները գտնվում են ձևավորման կամ զարգացման փուլում, այդ իսկ պատճառով ամեն ինչ նախապես պետք է խնամքով և նպատակային կազմակերպել: Բացի այդ՝ որքան քայլերը ճիշտ են մշակված, այնքան ուսուցչի բեռը թեթև է, և նա սովորականից ավելի շատ ժամանակ է ունենում անհատապես աշխատել սովորողի կամ զույգի հետ:

Քայլ 3. Համատեղ քննարկման զույգային աշխատանքի ավարտին անպայման խմբին պետք է հետադարձ կապ տալ և ամփոփել ու մեկնաբանություններով գնահատել թե՛ զույգային աշխատանքի որակը և թե՛ բովանդակային մասը՝ հնարավորություն տալով սովորողներին արդեն բարձրաձայն ամբողջ խմբի մոտ ներկայացնել իրենց քննարկման արդյունքները և այն հարցերը, որոնք իրենք չեն հասկացել:

❖ Խաղ-առաջադրանքներ

1. «Ո՞վ է ասում»

Նպատակը: Մտքում կարդալ–հասկանալու, մտքերը հիմնավորելու կարողությունների զարգացում:

Ընթացքը: Նախապատրաստել տեքստ կամ տեքստեր (դասանյութ կամ թեմատիկ խմբի դասանյութեր), սովորողներին բաժանել 4–5-հոգանոց խմբերի:

Հրահանգ: Յուրաքանչյուր խումբ պետք է առանձնացնի 5–7 հիմնական միտք, որ ասում են տեքստի (տեքստերի) հերոսները: Շարժվելով ժամսլաքի ուղղությամբ՝ խմբերը մեկը մյուսին պետք է առաջարկեն այդ մտքերը՝ խոսքը սկսելով «Ո՞վ է ասում…» բառերով: Մյուս խումբը պետք է հիշի՝ այդ միտքը, որ հերոսն է ասում և ինչու/ում/երբ:

Ուշադրություն: Օրինակ՝ եթե խաղն իրականացվում է թեմայի ամփոփման ժամանակ, և տեքստերը մի քանիսն են, զրույցը երկու խմբերի միջև կարող է լինել այսպիսին.

Հարց տվող խումբ- Ո՞վ է ասում. «Դու չե՞ս լսել, որ զենքերը Ողջ աշխարհի պիտի հալեն…»:

Պատասխանող խումբ- Ասում է «Տանկը թանգարանում» բանաստեղծության հրացանը, որպեսզի հանգստացնի իր **վիճակից** տրտնջացող տանկին: Կամ՝

Հարց տվող խումբ - Ո՞վ է ասում. «Ինչո՞ւ են վիրավոր քո թևերը»:
Պատասխանող խումբ – Ասում է «Մայր սագի հեքիաթի» սագիկներից մեկը՝ տեսնելով, որ կարկուտից մայրիկի թևերը վիրավոր են, պոկված են շատ փետուրներ

2. «Տաք է, սառն է»

Նպատակը: Արագ կարդալու, հրահանգներին հետևելու կարողությունների զարգացում:

Կահավորումը: Ընտրել տեքստեր, տպել առանձին թղթերի վրա և յուրաքանչյուրը բաժանել 4–6 մասի: Յուրաքանչյուր հատվածում ընդգծել 2–3 բանալի բառ կամ արտահայտություն: Տեքստերի մասերը տեղադրել առանձին ծրարներում:

Ընթացքը: Խաղացողներին բաժանել խմբերի:

Հրահանգ- Հերթով յուրաքանչյուր խմբից մեկ խաղացող դուրս է գալու սենյակից: Այդ ընթացքում սենյակում գտնվողներից մեկը բարձրաձայն ընթերցելու է որևէ տեքստ: Վերադառնալով սենյակ՝ խաղի մասնակիցը նույն տեքստի մասերը ստանալու է ծրարով: Նա պետք է 20 վայրկյանում ճիշտ հաջորդականությամբ դասավորի տեքստի մասերը՝ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր հատվածում գույնով առանձնացված մասերին: Այդ ընթացքում իր խմբի անդամները կարող են ուղղորդել իրենց ընկերոջը՝ արտասանելով միայն «տաք է», «սառն է» բառերը:

Հաղթող կճանաչվի այն խումբը, որը տրված ժամանակում (կամ ավելի շուտ) կկարողանա ճիշտ վերականգնել իր տեքստը:

3. «Շտապում եմ»

Նպատակը: Արագ կարդալու կարողության զարգացում:

Կահավորումը: Նախապատրաստել 1-էջանոց տեքստեր՝ վերնագրի համար թողնելով դատարկ տող:

Ընթացքը: Խաղացողներին բաժանել զույգերի: Յուրաքանչյուր մասնակցի տալ մեկ տեքստ:

Հրահանգ- Աշխատելով զույգի հետ՝ պետք է հնարավորինս արագ կարդաք տեքստը: Ունեք փորձի 3 հնարավորություն: Նախ՝ խաղացողներից մեկը պետք է հետևի, որ իր զույգը՝

- 30 վայրկյանում կարդա տեքստը՝ արագ անցնելով որոշ բառերի վրայով և ասի՝ ինչի մասին կլինի տեքստը:
- 60 վայրկյանում կարդա տեքստը՝ ընդգծելով որոշ կարևոր բառեր ու արտահայտություններ:
- 90 վայրկյանում կարդա տեքստը և վերնագրի այն:
- 60 վայրկյանում ներկայացնի՝ ինչի մասին է տեքստը:

Այսպիսով՝ տեքստի ընթերցումը կտևի 4 րոպե: Այնուհետև զույգ կազմող խաղացողները կփոխվեն տեղերով և կաշխատեն նույն սկզբունքով:

4. «Գտի՛ր նախադասությունը»

Նպատակը: Սահուն կարդալու կարողությունների զարգացում:

Ընթացքը: Սովորողները բացում են ուսումնասիրվող նույն տեքստը:

Հրահանգ– Կարդալու եմ տեքստի որևէ հատվածից բանալի բառը, իսկ դուք պետք է տեքստում աչքերով որոնեք և ընթերցե՛ք այն նախադասությունը, որտեղ գործածված է այդ բառը: Եթե մի քանի նախադասություններում է այն գործածվել, կարդում եք բոլոր նախադասությունները:

1.2. Ընթերցանության տեխնիկան շտկող ու զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

- **Ընթերցանության տեխնիկայի ձևավորման և մոտիվացման վարժանքներ:** Ելնելով սովորողների և թեմայի առանձնահատկություններից՝ ըստ անհրաժեշտության կանոնավոր կերպով կիրառել ստորև նկարագրված տեխնիկան, որի վերջնարդյունքում կարող եք զգալիորեն բարելավել ընթերցանության արագության ցուցանիշները և, հետևաբար, հասնել ընթերցանության առոգանության, արտահայտչականության, իմաստի ընկալման բարձր արդյունքների:

1. **Բարձրաձայն կարդալ**
2. **Մտքում կարդալ**
3. **Խմբով կարդալ**
4. **Ընթերցանություն շուտասելուկի արագությամբ**

5. **Շղթայաձև ընթերցանություն** (մեկական բառ, նախադասություն, պարբերություն): Կարդում են՝ մեկը մյուսին շարունակելով:

6. **Դինամիկ ընթերցում**: Գրատախտակի կամ քարտի վրա գրված է 5-7 բառից բաղկացած սյունակ, գրված բառերի տառերի քանակը հերթով ավելանում է՝ բառերի մեջ եղած տառերի աստիճանական աճով:

7. **Զույգերով ընթերցում:** Նույն տեքստը հերթով կարդում են 2 աշակերտ, հետո միմյանց ընթերցածը մեկնաբանում են:

8. **Հերթ**: Սկզբում կարդում է ուսուցիչը, ապա նույն տեքստը կարդում են աշակերտները:

9. **Քարշակ.** ա) Ուսուցիչը բարձրաձայն կարդում է՝ փոխելով ընթերցման արագությունը: Աշակերտները նույնպես կարդում են բարձրաձայն՝ փորձելով հետ չմնալ ուսուցչից:

բ) Ուսուցիչը կարդում է բարձրաձայն, երեխաները կարդում են մտքում: Ուսուցիչը դադարում է կարդալ, աշակերտները ցույց են տալիս այն բառը, որտեղ կանգ է առել ուսուցիչը:

10. **Թակարդ**: Ուսուցիչը կամ վարժ կարդացող աշակերտը կարդում է մի ծանոթ տեքստ և որոշ բառեր փոխում է հոմանիշներով: Մյուս աշակերտները փնտրում են փոխված բառերը:

11. **Թռիչք:** Աշակերտները կարդում են բառը՝ մեկ. մի բառ կարդալուց հետո բաց են թողնում կողքի բառը, կարդում են հաջորդը:

12. **Գլուխ և պոչ:** Ուսուցիչը սկսում է կարդալ նախադասությունը, երեխաները արագ գտնում են այն և շարունակում են միասին կարդալ:

13. **Առաջինն ու վերջինը:** Աշակերտներն ընթերցում են բառի առաջին և վերջին տառերը, տողի առաջին և վերջին բառերը, նախադասության առաջին և վերջին բառերը:

14. **Պահմտոցի:** Տեքստում գտնել որոշակի նշանով բառեր (օրինակ՝ բառը սկսվում է Ա տառով, բաղկացած է երկու վանկից և այլն):

15. **Շրջանաձև ընթերցում:** Աշակերտներն իրար հետևից մի քանի անգամ կարդում են փոքր տեքստը՝ բառ առ բառ:

16. **Ո՞վ ավելի արագ**: Գրատախտակին գրված է մի նախադասություն, իսկ սեղանին ցրված տեքստեր են դրված: Ուսուցչի հրահանգով աշակերտները տեքստերի մեջ փնտրում են այդ նախադասությունը:

17. **Լուսանկարող աչք**: Գրատախտակին սյունակով գրված են բառեր, որոնք աշակերտները մի որոշ ժամանակ կարդում են, ապա ուսուցիչը փակում է սյունակը, իսկ աշակերտները հիշողությամբ ասում են՝ ինչ բառեր էին գրված:

18. **Մեկ անգամ էլ:** Այս վարժության համար տեքստից բացի անհրաժեշտ է վայրկենաչափ:

Հանձնարարություն: Կարդա՛ տեքստը 1 րոպե տևողությամբ: Ուսուցիչը ուշադրություն է դարձնում ընթերցման արագությանը, արտահայտչականությունն առայժմ անտեսում ենք: Ժամանակը լրանալուն պես ընդհատում է, նշում է, թե որքան կարդաց, որ հատվածին հասավ: Մի փոքր հանգստանում է, կարդում է նույն տեքստը դարձյալ 1 րոպե: Դարձյալ նշում է կարդացածի տևողությունը, դիտարկում, որ այս անգամ ավելի շատ է ընթերցել: Երրորդ անգամ արդյունքն ավելի լավ կլինի:

Ո՞րն է այս վարժանքի նպատակը. ընթերցանության արագության զարգացում և մոտիվացում, քանի որ երեխան ինքը տեսնում է իր առաջընթացը և ոգևորվում:

- **Տարրական դպրոցում ընթերցանության հմտությունների զարգացման, աչքերի կոորդինացիան զարգացնող վարժանքներ**

Վարժանք 1. Կիսած ձմերուկ: Հարցրե՛ք երեխային՝ արդյոք տեսնելով ձմերուկի կեսը՝ նա կպատկերացնի ամբողջական ձմերուկը: Նա իհարկե կպատասխանի, որ՝ այո՛: Իսկ հիմա առաջարկե՛ք նույն փորձը կատարել բառերի հետ: Բացե՛ք ընթերցվող էջը, քանոնով այնպես փակե՛ք գրքի մի տողը, որ երևան միայն բառերի վերին հատվածները:

Հանձնարարություն: Կարդացե՛ք տեքստը՝ նայելով միայն տառերի վերին մասերին, որից հետո քանոնի դիրքը փոխե՛ք և ցուցադրե՛ք բառերի ներքևի հատվածը:

Այս անգամ աշակերտները կարդում են՝ նայելով միայն բառերի ներքևի հատվածներին. ի դեպ, դա ավելի դժվար է: Կա մեկ այլ տարբերակ ևս. պատրաստե՛ք պարզ բառերի քարտեր, ապա այդ քարտերը կտրե՛ք 2 մասով այնպես, որ վերևի հատվածը առանձնանա:

Հանձնարարություն: Միավորե՛ք ճիշտ հատվածները: Ինչո՞վ է արդյունավետ այս հնարը: Այն զարգացնում է անտիցիպացիան՝ կանխարկումը: Կանխարկումը ուղեղի այնպիսի ունակություն է, ինչը մեզ հնարավորություն է տալիս ընթերցանության ընթացքում չկարդալ բոլոր տառերն ու բառերը: Ուղեղը գիտի, որ դրանք գրված են, բայց ժամանակ ծախսել և հատ-հատ կարդալ պետք չէ, մի հայացքով կարելի է ընկալել գրվածը: Կանխարկումը կարելի է զարգացնել, այն ընթերցումը դարձնում է սահուն, թեթև և ընկալելի:

Վարժանք 2. Մոլորված տառեր: Կանխարկումը զարգացնող ևս մեկ վարժություն:

Տառերն ու բառերը երբեմն կորչում են, բայց նույնիսկ առանց մի քանի տառի և բառի հնարավոր է կարդալ. Փորձենք.



Գրատախտակին, թղթին կամ տպագրած ձևով գրե՛ք նմանատիպ արտահայտություններ.

գույնզ…. ծաղիկներ
դեղ…. տերևներ
գեղ….. աղջիկ
Бобик все котлеты съел,
Он делиться не …….

Հանձնարարություն: Կարդալ՝ կռահելով չգրված տառերն ու բառերը: Կարող եք լրացնել այլ օրինակներով:

Վարժանք 3. Սուր աչք: Ուղղանկյան պատկերի մեջ խառը հերթականությամբ գրե՛ք 1-30 թվերը՝ որքան հնարավոր է անկանոն:

Աշակերտը ուշադիր նայում է պատկերին, ապա ուսուցիչը նրա հետ սկսում է հաշվել 1-ից մինչև 30՝ միջին տեմպով:

Հանձնարարություն: 1 հաշվարկին գտի՛ր և մատով ցո՛ւյց տուր 1 թիվը, 2 հաշվին՝ 2-ը, 3-ը …և այդպես՝ շարունակ:

Եթե երեխան կանգ է առնում մի թվի վրա, պետք է հաշվարկը շարունակել, փնտրել արագ և առաջ անցնել: Այնուհետև կարելի է թվերի տեղը փոխել:

Ո՞րն է այս վարժանքի իմաստը. այն ընդլայնում է տեսողական դաշտը: Կարդալու ընթացքում պետք է ոչ միայն տառն ու բառը որսալ, այլև՝ շրջակա գրվածքը, տողը: Որքան ընդգրկուն է ընթերցման տեսադաշտը, այնքան արագ է ընթերցումը:

Վարժանք 4. Շերլոկ Հոլմս: Թղթի վրա խառը հերթականությամբ գրե՛ք տարբեր, ոչ շատ երկար բառեր, ապա խնդրե՛ք երեխային որևէ բառ գտնել այդտեղից: Օրինակ՝ շրջանակ, գդալ, աթոռ, ձի, ոսկի, օճառ, գրիչ, մուկ, բերան, ծունկ, շուն, ամառ, լիճ, սար և այլն: Երեխան յուրաքանչյուր հաջորդ բառն ավելի արագ կկարողանա գտնել, քան՝ նախորդը, քանի որ բառը փնտրելիս նա կարդում է տեքստի մյուս բոլոր բառերը, ուստի մտապահում է, թե որը որից հետո է գրված:

«Շերլոկ Հոլմս» վարժության շնորհիվ ընդլայնվում է երեխայի տեսադաշտը, աճում է կարդալու արագությունը:

Վարժանք 5. Հայելանման ընթերցանություն: Պատկերացրե՛ք՝ մենք հայելանման աշխարհում ենք, և ամեն ինչ այստեղ հակառակն է: Այստեղ կարդում են ոչ թե ձախից աջ, այլ՝ աջից ձախ: Փորձենք: Սկսում ենք գրքի տողերը կարդալ աջից ձախ: Բառերը շրջել հարկավոր չէ, օրինակ՝ «գետաձի» բառը պետք չէ կարդալ «իձատեգ»: Այս մեթոդով ընթերցման ժամանակ կորչում է տեքստի իմաստը, և ողջ ուշադրությունը սևեռվում է բառերի ճիշտ և հստակ արտասանության վրա:

Վարժանք 6. «Խենթ» գիրք: Ասե՛ք երեխաներին, որ երբեմն որոշ «խենթ» գրքեր կարող են գլխիվայր շրջվել: Երեխան սկսում է բարձրաձայն կարդալ: Որոշ ժամանակ անց դուք ծափահարում եք, երեխան գիրքը գլխիվայր շրջում է և այդ դիրքով կարդում է այնտեղից, որտեղից որ ընդհատել էր: Սկզբում կարելի է տեքստի վրա մատիտով նշումներ անել, որ շփոթմունք չլինի: Եվ այսպես՝ մի քանի անգամ գիրքը գլխիվայր շրջելով՝ կարդում է: Եթե երեխան 1-ին կամ 2-րդ դասարանցի է, կարելի է այս վարժությունն անել ոչ թե գրքով, այլ սովորական թղթի վրա տպագրված բառերով:

Ի՞նչ է տալիս այս հնարը. զարգացնում է աչքերի կոորդինացիան, տեքստում կողմնորոշվելու ունակությունը, մտապահվում է տառերի տեսքը, զարգանում է տեղեկությունը վերլուծելու ունակությունը:

Վարժանք 7. Բզզացող ընթերցանության տեխնիկա: Աշակերտի նստարանին դրված է լինում տանից բերված մի գիրք, որը դասի մի հատվածում (բոլոր դասերի ժամերին՝ մաթեմատիկա, տեխնոլոգիա...) սկսում են կարդալ: Սովորողը կարդում է բարձրաձայն, ցածր հնչերանգով, որպեսզի չխանգարի դասարանցիներին, յուրաքանչյուրն իր արագությամբ՝ 5 րոպե: Կարդալուց հետո որևէ բան չի քննարկվում, պարզապես փակում են գիրքը և անցնում դասի հաջորդ փուլին:

Վարժանք 8. Ամենօրյա հինգրոպեանոց ընթերցում: Դասարանի յուրաքանչյուր աշակերտ ունի իր գիրքը, որը նա կարդում է ամեն դասին: Յուրաքանչյուր դասին՝ 5 րոպե, օրական՝ 4 դաս, շաբաթական՝ 5 օր: Շաբաթական մարզումը տևում է 100 րոպե: Ընթերցանության ժամանակն ավելանում է գրեթե 50 անգամ:

- **Երեխաներին ընթերցանության մեջ ներգրավելու միջոցներ**

Անհրաժեշտ է երեխաներին բացատրել, որ կարդալուց կարելի է հաճույք ստանալ և դրական զգացումներ ունենալ: Այս փուլում առաջին դասարանցիների ընթերցանության գործունեությունը կազմակերպվում է հետևյալ կերպ. նրանք համակարգված լսում են

փոքր հեքիաթներ, պատմություններ, բանաստեղծություններ, որոնք ուսուցիչն է ընտրում և կարդում նրանց համար: Ուսուցչի օգնությամբ նրանք սովորում են լսել կարդացածը, մտապահել այն, պատկերացնել և կարևորել էական մանրամասներն ու պատկերները, ճանաչել դրանք գրքում՝ հավաքականորեն փոխկապակցելով ստեղծագործության բովանդակությունը դրա արտաքին նշանների հետ:

● Սովորեցնել մտապահել իրենց կարդացած գրքերի անունները: Դասարանում սիրված գրքերի ցուցադրություն անել, քննարկել:

Ընթերցանության դասեր անցկացնելիս.

● Օգտագործել վառ պատկերազարդումներով գրքեր, որոնք ճշգրիտ համապատասխանում են գրքի բովանդակությանը:

● Անցկացնել ամենապարզ գրական խաղեր:

● Բարձրաձայն կարդալ երեխաների համար և ոգևորությամբ խոսել գրքերի մասին:

● Կարդալ մինչև ամենահետաքրքիր պահը և ընդհատել:

● Ցուցաբերել դերասանական վարպետություն. կարդալ՝ ըստ դերերի:

● Փորձե՛ք արկածների վերածել ընթերցածը և դրա մեջ գաղտնի իմաստներ փնտրել:

● Գրքերն ընտրել երեխայի հետ միասին:

● Զուգահեռնե՛ր անցկացրեք կերպարների և ձեր միջև, գտե՛ք ընդհանրություններ և տարբերություններ:

● Ընտրե՛ք գունագեղ նկարազարդած գրքեր. դրանք ավելի կհետաքրքրեն երեխաներին:

● Երեխային հետաքրքրող, ճիշտ գրքեր ընտրե՛ք:

Ընթերցում կազմակերպեք բոլոր առարկաների դասերին՝ կիրառելով ընթերցանության 5 որպե մեթոդը:

1.3. Ընթերցանության արտահայտչականությունը զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

Արտահայտիչ կարդալն ի ծնե տրվող ունակություն չէ, այն ձեռք է բերվում վարժանքների միջոցով:

Բարձրաձայն, արտահայտիչ կարդալը լուծում է հետևյալ խնդիրները՝

- հիշողության ամրապնդում,
- բառապաշարի հարստացում, երևակայության խթանում,
- հստակ առոգանության, արտահայտիչ հնչերանգի ձևավորում,
- երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացում,
- աշխարհայացքի ընդլայնում,
- գեղագիտական դաստիարակություն, գեղեցիկի ընկալում:

Արտահայտիչ ընթերցանության միջոցով ձևավորվում է՝

- դադարներն ու տրամաբանական շեշտերը պահպանելու ունակություն,
- հարցի հնչերանգը պահպանելու կարողություն,

- կերպարների, բանաստեղծության մեջ պատկերված հերոսների, դրանց բնորոշ հատկանիշները բացահայտելու ունակություն:

Ընթացք

Տեքստն ընտրելուց հետո աշակերտին առաջարկել արտահայտիչ կարդալ: Այնուհետև կարդում է ուսուցիչը, և միասին համեմատում են երկուսի արտահայտչականությունը: Ապա աշակերտի հետ տարբեր հնչերանգներով կարելի է կարդալ տեքստը, մի քանի տարբերակ հետո անդրադարձ կատարել: Օրինակ՝ Այսօր սովորեցինք, որ արտահայտիչ կարդալու համար նախ՝ պետք է ընկալենք տեքստի «տրամադրությունը»: Բարձրաձայն ընթերցելիս մենք պետք է փոխանցենք այդ տրամադրությունը:

Տարրական դպրոցում կարելի է նաև ոտանավորը կարդալ սիրած մուլտֆիլմի կամ ֆիլմի հերոսի նմանակմամբ: Այդ միտքը ոչ միայն կուրախացնի երեխաներին, այլև կսովորեցնի արտահայտիչ ընթերցանության ոճային հնարավորությունները:

Տնային աշխատանք կարելի է հանձնարարել կազմել «Տրամադրությունների տետր», որում երեխաները կնշեն որևէ տրամադրություն և դրան համապատասխան բառը, իսկ այնուհետև՝ բանաստեղծության տողեր և հատվածներ:

❖ Ընթերցանության արտահայտչականությունը զարգացնող հնար.

Գրե՛ք «Թռչունները եկան» նախադասությունը և խնդրե՛ք՝ այն կարդան՝

1. հանգիստ,
2. ուրախ,
3. բարձր,
4. շշուկով,
5. տխուր,
6. այլայլված,
7. վախեցած,
8. չարությամբ,
9. հիացմունքով:

Ո՞րն է սրա նպատակը: Ձևավորում և զարգացնում է արտահայտիչ կարդալու ունակությունը, ձայնի միջոցով զգացմունք և զգացողություն փոխանցելու կարողությունը: Իհարկե, այս ցանկում կարելի է ընդգրկել ասացվածքներ, շուտասելուկներ:

Թեմայի ամփոփում աղյուսակի միջոցով: Սովորողները բաժանվում են 3–5-հոգանոց խմբերի, ստանում են 1-ական աղյուսակ, դասագիրքը թերթելով և կանգ առնելով յուրաքանչյուր դասանյութի վրա՝ լրացնում են աղյուսակը: Օրինակ՝

Դասանյութ	***Ի՞նչ սովորեցի***	***Ի՞նչ եմ կարողանում անել ավելի լավ***	***Ի՞նչը կարևորեցի***
Կաթիլը	- Սառույցը և ամպը նույնպես ջուր են: - Ջուրը անընդհատ պտտվում է բնության մեջ…	- Տարբերել պարզ, բարդ, ածանցավոր բառերը: - Ածանցավոր և բարդ բառերի մեջ առանձ–նացնել բաղադրիչները:	- Ջրի ամեն մի կաթիլը թանկ է բնության համար:
Անտառի բնակիչները	- Տարբեր կենդա–նի–ներ տարբեր կերպ են անց–կացնում ձմեռը: - Կենդա–նի–ների, թռչուննե-րի, միջատների և այլ խմբերի հավա–քա–կան անունները:	- Դերային խաղում ներկայացնել ստանձ-նած դերը:	- Բոլոր կենդանի–ների, թռչունների համար դժվար է ձմռանը և նրանց պետք է օգնել:
Գետակը	- Գետի ջուրը մարդիկ տարբեր նպատակներով են օգտագործում: - Բոլոր գետերը թափվում են ծովը:	- Պատմել բա–նաս–տեղծության բովան-դակությունը: - Խմբավորել հոմա–նիշ և հականիշ բառերը:	- Աշխատասիրությամբ կարելի է շատ բարիքներ ստեղծել:
Ում համար է խնձորը	-«Սաղարթ», «մրմնջալ», «ավար», «կացարան» բառերի իմաստը:	- Վերլուծել, տեքստը, արտահայտել վերաբերմունք:	- Նույն հարցի, երևույ–թի մասին մարդիկ կարող են ունենալ տարբեր կարծիքներ:

Արջի և վարազի կռիվը			
Կարկուտը			
Տերևը			
Տերևաթափ			
Սարը			
Ծիտիկների տունը			

- Յուրաքանչյուր խումբ ընտրում է 1-2 դասանյութ, աղյուսակից օգտվելով՝ ներկայացնում ձևակերպած մտքերը: Մյուս խմբերը, ցանկության դեպքում, լրացնում են ներկայացումը:

Դեր-լսարան-ձև-թեմա: Տարբեր խնդիրներ քննարկելու, շատ հարցերի պատասխանելու համար կարելի է կիրառել «Դեր-լսարան-ձև-թեմա» մեթոդը: Սովորողները բաժանվում են 4 խմբի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է որևէ խնդիր, օրինակ՝ բնությանն առնչվող, որոշում է՝ ինչ դեր է ինքը ստանձնում, ում է ներկայացնելու առկա խնդիրը, ինչպես է ներկայացնելու և ինչ լուծում է ինքն առաջարկում: Օրինակ՝

Դեր	«Բնությունը մենք ենք» կազմակերպության անդամներ
Լսարան	Գինու գործարանի ղեկավարներ
Ձև	Նամակ
Թեմա	«Խաղողի բույր» գործարանի հարգելի՛ տնօրեն, մենք շատ ուրախ ենք, որ Հայաստանի անուշ խաղողը Ձեր գործարանում վերածվում է գինու, հյութի, չամիչի և այլ բարիքների ու զարդարում է մեր սեղանները: Շնորհակալ ենք, որ Դուք հայկական խաղողից ստացվող բարիքներով աշխարհին ճանաչելի եք դարձնում Հայաստանը: Բայց մենք շատ անհանգստացած ենք, որ գործարանի պլաստիկե, ապակե և թղթե թափոնները լցվում են մոտակա գետը՝ աղտոտելով ջուրն ու շրջակա միջավայրը: Այդպիսով՝ մենք թանկ ենք վճարում գործարանի արտադրանքի համար՝ զոհելով գետում և գետի շուրջն ապրող կենդանիներին ու բույսերը… Խնդրում ենք քայլեր ձեռնարկել՝ գործարանի թափոններն այլ ճանապարհով գործարանից դուրս հանելու ուղղությամբ: Մենք առաջարկում ենք պայմանավորվել ապակի, պլաստիկ և թուղթ վերամշակող արտադրամասերի հետ՝ ապակե տարաները, պլաստիկը և թուղթը վերամշակելու համար:

«Ընթերցողի թատրոն»: Կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով կարելի է կիրառել «Ընթերցողի թատրոն» (Ստանիսլավսկու շրջան) մեթոդը՝ հետևյալ քայլաշարով.

- ընտրել երկխոսություններով հարուստ տեքստ,
- որոշել ընթերցողների թիվը,
- բազմացնել տեքստը ընթերցողների թվին համապատասխան,
- քննարկել յուրաքանչյուր դերի ընթերցման առանձնահատկությունները,
- արտահայտիչ կարդալ տեքստը՝ դերին համապատասխան հնչերանգն ու տրամադրությունը պահպանելով:

- «Ընթերցողի թատրոն» մեթոդին զուգահեռ կարելի է արդյունավետորեն կիրառել նաև դերային խաղը, քանի որ, ի վերջո, ընթերցանությունն էլ ուղղված է բառապաշարի հարստացմանն ու խոսքի զարգացմանը:
- Տե՛ս՝ Դերային խաղ

Ընթերցանության խրախուսման և ընթերցողական որակներ զարգացնող ռազմավարությունների գործիքակազմեր.

➢ Սովորողների մենթորական միջամտության գործիքներ. վարժ կարդացողներ-դժվար կարդացողներ. զույգերով աշխատանք

➢ ՈւՀՁ-ի կիրառության գործիքներ

➢ «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» մեթոդական գործիքակազմ

➢ Տարբերակված ուսումնառության գործիքներ

➢ Հետադարձ կապի գործիքներ

➢ Ձևավորող գնահատման գործիքներ

Հավելյալ նյութ 1՝ ընթերցանության տեխնիկայի մասին

- **Հավելյալ նյութ 2՝ ընթերցանության տեխնիկայի մասին**
- **Հավելյալ նյութ 3՝ ընթերցանության տեխնիկայի մասին**
- **Հավելյալ նյութ 4՝ ՈւՀՁ**
- **Հավելյալ նյութ 5՝ Քննադատական մտածողություն**
- **Հավելյալ նյութ 6՝ Քննադատական մտածողություն**
- **Հավելյալ նյութ 7՝ Տարբերակված ուսուցում**
- **Հավելյալ նյութ 8՝ Հետադարձ կապ**
- **Հավելյալ նյութ 9՝ Ձևավորող գնահատում**
- **Հավելյալ նյութ 10՝ Ձևավորող գնահատում**
- **Հավելյալ նյութ 11՝ Դերային խաղ**
- **Հավելյալ նյութ 12՝ Ընթերցածի ըմբռնում**
- **Հավելված նյութ 13՝ Դպրոցի գրադարանավարի գործառույթները**

❖ **Արտադասարանային աշխատանքներ**

Արտադասարանային աշխատանքները կազմակերպվելու են ՄԿԱ գծով տնօրենի տեղակալի անմիջական հսկողությամբ և կազմակերպմամբ՝ ընթերցանության խմբակի ղեկավարի, ԴԱԿ-ի, գրադարանավարի, ուսուցիչների և այլ աշխատողների ներգրավմամբ:

➢ **Ընթերցանության բլոգ:** Բլոգում ընթերցանության խմբակը վարողը կարող է տեղադրել շաբաթ-կիրակի օրերին կամ արձակուրդի ժամանակ ընթերցվելիք առաջարկվող գրքերի ցանկը՝ որոշակի առաջադրանքներով, այդ տիրույթում կազմակերպել քննարկում և այլ աշխատանքներ: Առաջարկվում է 1-4-րդ դասարանների համար արտադասարանային ընթերցանության ցանկ, որը կարելի է տեղադրել բլոգում կամ օգտագործել ընթերցանության խրախուսման աշխատանքները կազմակերպելիս: **Ցանկը տե՛ս «Հավելվածներ և էլեկտրոնային ռեսուրսներ» բաժնում:**

➢ **Ասմունքի մրցույթ**: Առաջարկվում է ասմունքի մրցույթը կազմակերպել հոկտեմբեր և մայիս ամիսներին: Հոկտեմբերին կարելի է սովորողների նախընտրած ստեղծագործություններն ընդգրկել, իսկ մայիսին՝ ուսուցչի կողմից ընտրված ստեղծագործությունները: Բոլոր սովորողներին կարելի է խրախուսել գրքերով, տիկնիկային թատրոն այցելության տոմսերով և այլն:

➢ **Հեքիաթի բեմականացում:** Նախատեսված է տարրական դպրոցի սովորողների համար: Նախընտրելի են հայկական ժողովրդական և այլ ժողովուրդների համանման սյուժեներով հեքիաթների միաժամանակյա բեմադրություններ, քննարկումներ:

➢ **Ընթերցած գրքի քննարկում**: Գրքերը անհրաժեշտ է ընտրել՝ հաշվի առնելով նաև սովորողների նախասիրությունները և տարիքային առանձնահատկությունները: Քննարկումների ձևաչափի մեթոդական հիմքը կարող են դառնալ բանավիճային քննարկումների տարբեր մեթոդներ, ինչպես՝ «Մտածողության 6 գլխարկները», «Սուր անկյունները» և այլն:

➢ **Կարդացած գրքի վերաբերյալ փոքրիկ գովազդային հոլովակի ստեղծում**: Հոլովակը կարելի է պատրաստել հեռախոսային տարբեր հավելվածներով, ինչպես՝ InShot, Picsart, Lomotif, Video maker և այլն: Հոլովակի տևողությունը կարող է լինել 2-3 րոպե, իսկ բովանդակության մեջ սովորողը համառոտ կներկայացնի կարդացած գիրքը՝ նշելով, թե ինչու է առաջարկում կարդալ այն:

➢ **Ընթերցանության շաբաթի կազմակերպում:** Սովորողների համար հայտնի կամ իրենց սիրած գրքերն են կարդում հրավիրված ծնողները, ուսուցիչները կամ հայտնի մարդիկ: Կարող են ընդգրկվել նաև ավագ դասարանների սովորողներ: Նախընտրելի է շաբաթը կազմակերպել Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվա միջոցառումների համատեքստում: Ընթերցանությունը կարելի է կազմակերպել անմիջական, անկաշկանդ միջավայրում, օրինակ՝ այգում, բնության մեջ, դասասենյակում՝ բարձերի վրա նստած և այլն:

Ընթերցանության շաբաթվա միջոցառումների մեջ կարելի է իրականացնել այցելություններ գրադարաններ և մեծ գրախանութներ, գրքի ցուցահանդեսներ, հրատարակչություններ:

Ընթերցանության շաբաթվա միջոցառումների մեջ կարելի է ներառել նաև մարաթոնյան ընթերցանություն. ընտրված գրքից հատվածը 2-5 րոպե կարդալուց հետո սովորողը հերթափոխը փոխանցում է մյուսին: Մարաթոնյան ընթերցանություն կարելի է կազմակերպել նաև տեսակապով:

➢ **Կարդացած գրքերի փոխանակման խաղեր. կարդա՛ և փոխանցի՛ր, ստուգի՛ր:** Դպրոցի գրադարանավարը առաջարկում է գրականության ցանկ, որից սովորողը ընտրում և կարդում է մի գիրք՝ փոխանակելով պատահականության սկզբունքով ընտրված իր ընկերոջ հետ: Գրքերը ամենաարագը կարդացած զույգը ներկայացվում է խրախուսման: Կարելի է նաև մասնակցել որևէ հրատարակչության՝ ընթերցանությանը նվիրված ծրագրին. առաջարկվում է կարդալ հրատարակչության կողմից ներկայացված ցանկի գրքերից մեկը, փոխանցել ընկերոջը և գնել դրանցից մեկը:

➢ **Խաղ-վիկտորինա ընթերցած գրքի շուրջ:** Վիկտորինան կարելի է կազմակերպել ինչպես նույն դասարանի սովորողների միջև, այնպես էլ՝ տարբեր դասարանների: Հարցերը կարող են ներառել ոչ միայն սյուժեի իմացության ստուգմանն ուղղված առաջադրանքներ, այլև ստեղծագործական, քննադատական, վերլուծական-համեմատական, բանավիճային, ինտերակտիվ բնույթի տարբեր հարցեր և առաջադրանքներ:

2. Արտադասարանային աշխատանքներ

Ընթերցանության համար առաջարկվող գրականություն՝ ըստ դասարանների

1-ին դասարան

1. Ծուռ Դավիթը (Ջուլիեթ Սոմանդ)
2. Կապույտ Աղվեսը (Լիլիթ Ալթունյան)
3. Անտեսանելի Տոնինոն (Ջաննի Ռոդարի)
4. Գիտե՞ս, թե ով է Երկարագուլպա Պիպին (Աստրիդ Լինդգրեն)
5. Պետրոսիկը և Լուսինը (Ալիս Բրիեռ – Հաքետ)
6. Սփիֆեն: Մաքրասեր Խոզուկի հեքիաթը (Մերի Ադա Շվարց)
8. Հեքիաթներ հեռախոսով (Ջաննի Ռոդարի)
9. Վինի Փու արջուկը (Ալան Ալեքսանդր Միլն)
10. Փու արջուկը տուն է կառուցում (Ալան Ալեքսանդր Միլն)
11. Իմ տատիկ Թանթիմարիան (Նաիրա Եդիգարյան)
12. Չիփչու Նիչուն և կամակորները (Նաիրա Եդիգարյան)

2-րդ դասարան

1. Կաքավիկը (Ղուկաս Սիրունյան)
2. Տորք Անգեղը մեր մեջ (Ղուկաս Սիրունյան)
3. Գլխիկոր հեքիաթ երազկոտ խոզուկի մասին (Վահագն Գրիգորյան)

4. Հսկան, որը գազար էր հաշվում (գերմանական ժողովրդական հեքիաթ)
5. Պեկինի վիշապները (չինական ժողովրդական հեքաիթ)
6. Ամալն ու Ջինը (պարսկական ժողովրդական հեքիաթ)
7. Փերիների խոհարարը (Շերլի Բարբեր)
8. Յոթերորդ միաեղջյուրը (Շիրլի Բարբեր)
9. Ջրահարս արքայադուստրը (Շիրլի Բարբեր)
10. Կաղանդ պապ: Վերադարձ Ռիգելից (Աստղիկ Սիմոնյան)

3-րդ դասարան

1. Հսկայի կինը (իռլանդական լեգենդ)
2. Շատ մեծ պատմություն (հնդկական հեքիաթ)
3. Փյունիկը (ռուսական հեքիաթ)
4. Համելինի առեղծվածային սրնգահարը (գերմանական լեգենդ)
5. Եսասեր հսկան (Օսկար Ուայլդ)
6. Փղիկը (Ռադյարդ Քիփլինգ)
7. Թե ինչպես գրվեց առաջին նամակը (Ռադյարդ Քիփլինգ)
8. Օզի կախարդը (վերապատում, Լայման Ֆրենք Բաում)
9. Գանձերի կղզին (վերապատում, Ռոբերտ Լյուիս Սթիվենսոն)

4-րդ դասարան

1. Հայդի (վերապատում, Յոհաննա Սպայրի)
2. Փոքրիկ տիկիններ (վերապատում, Լուիսա Մեյ Էլքոթ)
3. Ֆերդինանդ անունով թռչող վիշապը (Սամսոն Ստեփանյան)
4. Ջելսոմինոն Խաբեբաների աշխարհում (Ջաննդի Ռոդարի)
5. Չիպոլինոյի արկածները (Ջաննդի Ռոդարի)
6. Երկարագուլպա Պիպին (Աստրիդ Լինդգրեն)
7. Ալիսը հրաշքների աշխարհում (վերապատում, Լուիս Քերոլ)
8. Պինոկիո (վերապատում, Կառլո Կոլլոդի)
9. Փիթր Փենը Քենսինգթոնի այգիներում (Ջեյմս Մեթյու Բարրի)

2.1. ***Հովհ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրվան նվիրված ընթերցանության մրցույթ-փառատոն***

Նպատակը՝ սովորողների կարդալու որակական հատկանիշների, ինչպես նաև ընթերցասիրության զարգացում:

Մասնակիցները՝ 1-4-րդ դասարանների սովորողներ

Փուլեր՝

- 1-ին՝ խմբային կամ դասարանական
- 2-րդ՝ մասնախմբային
- 3-րդ՝ համադպրոցական
- Ժամանակահատված՝ փետրվարի 5-մարտի 5

Ժամկետներ՝ ըստ փուլերի.

- փետրվարի 8-19՝ նախապատրաստում
- փետրվարի 19 -ից՝ խմբային փուլ՝ 5 օր (3 հաղթող ամեն դասարանից)
- մարտի 1-ից՝ մասնախմբային փուլ՝ 5 օր (3 հաղթող ամեն մասնախմբից)
- մարտի 5-ից՝ համադպրոցական փուլ (1 հաղթող ամեն մասնախմբից)

Հանձնաժողովներ՝ (ըստ նպատակահարմարության)

Ընթացքը.

- 1-ին՝ խմբային փուլի համար ամեն ուսուցիչ (դասվար) ընտրում է անծանոթ տեքստ (տեքստեր), հանձնարարում, որ յուրաքանչյուր սովորող բարձրաձայն կարդա այն, պատասխանի բովանդակության յուրացումը պարզող 1-2 հարցի: Ամեն խմբից ընտրվում է 3 սովորող՝ տեքստը լավ կարդալ-հասկանալու համար:
- 2-րդ՝ մասնախմբային փուլի համար ընտրվում է անծանոթ տեքստ (տեքստեր), հանձնարարվում է, որ խմբերից ընտրված սովորողները բարձրաձայն կարդան և պատասխանեն բովանդակության յուրացումը պարզող 1-2 հարցի: Ամեն մասնախմբից ընտրվում է 3 սովորող տեքստը լավ կարդալ-հասկանալու համար:
- 3-րդ՝ համադպրոցական փուլի համար հանձնաժողովն ընտրում է անծանոթ տեքստեր՝ ամեն դասարանի համար (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ), լսում յուրաքանչյուր սովորողի՝ տեքստը բարձրաձայ կարդալ-հասկանալու կարողությունը: Ընտրվում է 4 սովորող՝ 1-ական սովորող 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններից:

Կարևոր հանգամանք: Միջոցառմանը պետք է տալ խմբային, մասնախմբային և համադպրոցական հնչեղություն, վերածել իրական տոնի: Համադպրոցական հավաքի ժամանակ կհայտարարվեն հաղթողների անունները և կհանձնվեն պատվոգրեր ու նվերգրքեր:

5. Ծրագիրն իրականացնողների գործառույթները և համագործակցությունը

➢ **Տնօրենի գործառույթները՝**

1. Ընթերցանությունը՝ որպես զարգացման հիմնական ոլորտ, ընդգրկում է դպրոցի զարգացման իր ռազմավարական ծրագրում:
2. Տարեկան պլանում նախատեսում է «Երկրորդ դասարանում ընթերցանության ուսումնասիրություն» աշխատանքը:
3. Մանկավարժական խորհրդի նիստում կազմակերպում է ուսումնասիրության արդյունքների քննարկում:
4. Տալիս է հանձնարարականներ՝ արձանագրված խնդիրները վերացնելու համար, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է դասվարների վերապատրաստումներ:
5. Կազմակերպում է աշխատանքներ ամբողջ տարվա ընթացքում մայրենիի ծրագրով նախատեսված ընթերցանության աշխատանքների վերահսկողության և կատարողականի ստուգման համար:

6. Նախաձեռնում է ընթերցանության արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման և կատարման քայլաշարի կազմումը:

7. ՈւԱԳՏ-ին հանձնարարում է վերահսկել ուսուցչի կողմից կիսամյակի վերջում կազմակերպած նկարազարդ գրքույկների շնորհանդեսի և ցուցահանդեսի միջոցառումը:

8. ՈւԱԳՏ-ին հանձնարարում է ստեղծել սովորողների ընթերցանության տեխնիկայի ստուգման ժամանակացույցներ:

9. ՈւԱԳՏ-ին հանձնարարում է վերահսկել սովորողների ընթերցանության որակի բարձրացման նպատակով ստեղծված ընթերցանության խմբակների գործունեությունը:

10. ՄԿԱԳ տեղակալին հանձնարարում է տարրական դպրոցում ստեղծել ընթերցանության «Մարդուկ-կարդուկ» խմբակը:

11. ՈւԱԳ տեղակալին հանձնարարում է վերահսկել ուսուցչի կողմից կազմակերպած սովորողների կարդացած գրքի ներկայացման օրվա հետ կապված աշխատանքները:

12. Հանձնարարում է դպրոցի գրադարանավարին՝ կազմակերպելու գրքի քննարկում՝ համագործակցելով ուսուցչի հետ:

13. Հանձնարարում է ՈւԱԳ տեղակալին՝ կազմակերպելու տարրական դասարանների միջև ընթերցանության մրցույթ:

➢ **Տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի գործառույթները**

1. Նկարագրում է երկրորդ դասարանում ընթերցանության ուսումնասիրության ընթացքը:

2. Նպաստում է գեղարվեստական, գիտական, գիտահանրամատչելի ստեղծագործությունների նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացմանը:

3. Նպաստում է գեղարվեստական, գիտահանրամատչելի ստեղծագործություններից ճիշտ օգտվելու համապատասխան գիտական էթիկայի ձևավորմանը:

4. Վերահսկում է ուսուցչի կողմից կիսամյակի վերջում կազմակերպած նկարազարդ գրքույկների շնորհանդեսը և ցուցահանդեսը:

5. Վերահսկում է ընթերցանության որակի բարձրացման նպատակով ստեղծված ընթերցանության խմբակների գործունեությունը:

6. Կազմակերպում է ընթերցանության, ասմունքի, դերային խաղերի մրցույթներ:

7. Վերահսկում է ուսուցչի կողմից կազմակերպած՝ սովորողների կարդացած գրքի ներկայացման օրվա հետ կապված աշխատանքներին:

8. Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպում է ընթերցանության որակի գնահատման (ձևավորող գնահատման միջոցով) ստուգատեսներ:

9. Կազմակերպում է տարրական դասարանների միջև ընթերցանության մրցույթ:

10. Վերահսկում է ուսուցիչների կողմից ընթերցանության խրախուսմանն ուղղված աշխատանքների ներառումը «Մայրենի» ուսումնական առարկայի թեմատիկ և օրվա դասի պլանավորման մեջ:

➢ **Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի գործառույթները**

1. Կատարում է տնօրենի հանձնարարականները արձանագրված խնդիրները վերացնելու համար, կազմակերպում է դասվարների անհրաժեշտ վերապատրաստումներ:
2. Կազմակերպում է էքսկուրսիաներ տարբեր գրադարաններ՝ ընթերցանությունը այնտեղ կազմակերպելու համար՝ գրադարանավարներին ներգրավելով այդ գործընթացում:
3. Կազմակերպում է ընթերցանության, ասմունքի, դերային խաղերի և թատերական մրցույթներ, գրքի քննարկումներ:
4. Լավագույն մասնակիցներին խրախուսում և ներկայացում է տարբեր մակարդակներում կազմակերպվող համապատասխան ստուգատեսներ:
5. Կազմակերպում է բաց դասեր, ցերեկույթներ՝ հրավիրելով մանկագիրների, ասմունքողների, դերասանների:
6. Տարրական դպրոցում ստեղծում է ընթերցանության «Մարդուկ-կարդուկ» խմբակը:
7. Գրադարանավարի հետ միասին կազմակերպում է հանդիպում ժամանակակից գրողների հետ:
8. Կազմակերպում է այցելություններ տարբեր հրատարակչություններ և գրախանութներ:
9. Մասնակցում և աջակցում է տարրական դասարանների միջև կազմակերպված ընթերցանության մրցույթին:

➢ **Դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի գործառույթները**

1. Տարրական դպրոցի սովորողների մեջ զարգացնում է տարբեր աղբյուրներից օգտվելու մշակույթ. սովորողները կարողանում են տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ համացանցից նյութեր քաղել և տիրապետել արագ ընթերցանության մեթոդների և ռազմավարությունների տեխնիկային (օրինակ՝ համայնապատկերային ընթերցանություն և այլն):
2. Կազմակերպում է ընթերցանության խրախուսմանն ուղղված արտադասարանային միջոցառումներ, աջակցում կազմակերպիչներին, վերահսկում աշխատանքները:
3. Կազմակերպում է միջոցառումներ՝ կարևորելով սովորողի ընթերցանության հմտությունները՝ ուսումնառական առաջընթաց գրանցելու համար:
4. Օժանդակելով ուսուցչին՝ կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով:
5. Կազմակերպում է տարբեր դասարաններում միջոցառումներ, ցերեկույթներ: Հրավիրում է ծնողներին, տատիկ-պապիկներին՝ մասնակցելու ընթերցանությանը նվիրված միջոցառումներին, մրցույթներին:

6. Օժանդակելով ուսուցչին՝ իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկում, կազմակերպում է կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին:

7. Տառուսուցման ավարտից հետո ուսուցչի հետ կազմակերպում է ընթերցանության մրցույթ՝ «Ես արդեն ընթերցող եմ» թեմայով:

8. ՈՒԱԳՏ-ի հետ կազմակերպում է այցելություններ հրատարակչություններ և գրախանութներ:

9. Համագործակցելով գործընթացի բոլոր մասնակիցների հետ՝ կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ տողան, որի ընթացքում խրախուսվում են բոլոր լավագույն ընթերցողները՝ սովորողները, ծնողները, մանկավարժները:

➢ **Տարրական դպրոցի մեթոդմիավորման նախագահի գործառույթները**

1. ՈՒԱԳՏ նկարագրությանը համապատասխան՝ մշակում է համապատասխան ձևաթղթեր (օգտվում է գրականությունից), իրականացնում է փաստաթղթային ուսումնասիրություններ (թեմատիկ պլան, դասերի պլաններ, սովորողների բնութագրեր), դասալսումներ և սովորողների ընթերցանության ստուգում:

2. Տեղեկացնում է երկրորդ դասարանում աշխատող դասվարներին ուսումնասիրության ծրագրին, ընթացակարգին տևողությանը և ժամանակացույցին:

3. Իրականացնում է ընթերցանության խրախուսմանն ուղղված՝ աշխատանքային պլանով նախատեսված դասարանային և արտադասարանային աշխատանքները, կազմում ժամանակացույց:

4. Մեթոդական շարունակական աջակցություն է տրամադրում դասվարներին ընթերցողական կարողությունների զարգացումը և ընթերցասիրությունը խթանող արդյունավետ միջոցառումների կազմակերպման նպատակով:

5. Կազմակերպում է ընթերցանության տեխնիկայի առաջին ստուգումը՝ կիրառելով մշակված գործիքը, վարում է ցուցանիշների գրանցամատյան: Ստուգման արդյունքները ներկայացվում և վերլուծվում են մեթոդմիավորման նիստի ընթացքում:

6. Կազմակերպում է սեմինար՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու վերաբերյալ (հնարավորության դեպքում հրավիրում է մեթոդիստի):

7. Աշխատանք է տանում ծնողների հետ (օրինակ՝ կազմակերպում է միջոցառումներ/նախագծեր՝ «Ընտանեկան ընթերցանություն», «Ընթերցում է ծնողը» և այլն, միջոցառումների ժամանակ որպես ժյուրիի անդամ ներառում է նաև ծնողների):

8. Տարբեր դասարաններում պլանավորում և կազմակերպում է բաց դասեր՝ կարդալու տարբեր տեսակների կիրառման և կարդալու որակական տարբեր հատկանիշների զարգացման ուղղությամբ փորձը ներկայացնելու նպատակով: Մեթոդմիավորման նիստի ժամանակ ներկայացնում է աշխատանքների ընթացքն ու արդյունքները:

9. Կազմակերպում է համադպրոցական միջոցառում՝ «Գիրք նվիրելու օր» և «Հովի. Թումանյանի ծննդյան օր», «Թարգմանչաց տոն» խորագրով:

10. Կազմակերպում է ընթերցողական կարողությունների ստուգատես, նախ՝ դասարանական, հետո՝ դպրոցական մակարդակով:

➢ **Տարրական դասարանների ուսուցչի գործառույթները**

1. Իրականացնում է սովորողների ընթերցանության մշտադիտարկումը:
2. Իրականացնում է սովորողների կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը:
3. Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից:
4. Կազմակերպում է կիսամյակի ընթացքում կարդացած գրքի նկարազարդումների միջոցով ներկայացումը սովորողների կողմից:
5. Կիսամյակի վերջում կազմակերպում է նկարազարդ գրքույկների շնորհանդես և ցուցահանդես:
6. Կազմակերպում է կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին:
7. Ամեն կիսամյակում կազմակերպում է «Դասը վարում է գրողը» գրական հանդիպում ժամանակակից գրողների հետ:
8. Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է սովորողների ընթերցանության տեխնիկան:
9. Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով:
10. Համագործակցում է ընթերցանության խրախուսման գործընթացի բոլոր մասնակիցների հետ:

➢ **Դպրոցի գրադարանավարի գործառույթները**

1.Գրքի ընտրություն: Օգնում է ընթերցողներին՝ իրենց տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ կատարել գրքի ընտրություն:
2. Կազմակերպում է արտադասարանային աշխատանքներ՝ ընտրված ստեղծագործության բարձրաձայն խմբային ընթերցանություն:
3. Ընթերցանության կազմակերպում բնության գրկում:
4. Կազմակերպում է գրական ունկնդրումը առաջին դասարանցիների համար:
5. Կազմակերպում է մրցույթ՝ «Լավագույն ընթերցող» մրցանակով, ստեղծում տեսանյութ՝ տեղադրելով համապատասխան կայքէջում:
6. Կազմակերպում է գրքի քննարկում՝ համագործակցելով ուսուցչի հետ:
7. Կազմակերպում է հեքիաթի բեմականացում՝ համագործակցելով ուսուցչի հետ:
8. Կազմակերպում է մրցույթ՝ «Լավագույն հեքիաթասաց» մրցանակով:
9. Սովորեցնում է ընթերցանության տեխնիկան:
10. Կազմակերպում է գրական խաղեր:
11. Կազմակերպում է վիկտորինաներ՝ ընթերցված գրքերի շուրջ:

12. Համագործակցում է ծնողների հետ:

13. Համագործակցում է Խնկո-Ապոր անվան ազգային մանկական և այլ գրադարանների հետ, կազմակերպում այցելություններ գրադարաններ:

14. Կազմակերպում է ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, մանկական գրքի ընթերցումներ հեղինակների, դերասանների, համայնքի ներկայացուցիչների, ուսուցիչների կողմից:

15. Համագործակցում է հրատարակչությունների հետ, կազմակերպում այցելություններ գրախանութներ:

16. Տարվա վերջում կազմակերպում է կարդացած գրքերի ամփոփում:

➢ **Գրադարանավարի համար. աշխատանքի կազմակերպում**

1. Գրքի ընտրություն: Օգնում է ընթերցողներին՝ իրենց տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ կատարել գրքի ընտրություն: Գրադարանավարը հարցերի միջոցով պետք է փորձի ճանաչել ընթերցողին, որից հետո ընտրի այնպիսի գիրք, որ համապատասխանի ընթերցողի տարիքային առանձնահատկություններին, ինչու չէ, նաև ինչ-որ կերպ կապ ունենա այն գրքերի հետ, որ նոր է կարդացել և հաճույք է զգացել: 7-9 տարեկան տարիքային խմբի համար հարմար են կարճ ու արկածային պատմվածքները: 10 տարեկան երեխաները որոնում են բարդ խնդիրներ, իրենց տարիքին համապատասխան անհատականություններ և դրանից բավականություն են ստանում: Նրանք սիրում են այն կերպարները, որոնք համապատասխանում են իրենց իդեալներին:

Գրադարանավարը, որպեսզի պարզի աշակերտի նախասիրությունները, կատարում է հետևյալ հարցադրումները՝

- Տանը մանկական գրականություն ունե՞ն, թե՞ ոչ:
- Եթե ունեն, ապա ինքնուրո՞ւյն են կարդում, թե՞ ծնողների ուղղորդությամբ:
- Ի՞նչ է սիրում կարդալ (հեքիաթ, արկածներ, պատմվածք, գիտաճանաչողական գրականություն և այլն):
- Սիրած առարկաները որո՞նք են:
- Սիրած զբաղմունքը ո՞րն է:

Այս հարցերից բացի՝ շփման ընթացքում երեխան էլ է թելադրում շփում, իսկ գրադարանավարը անկեղծ, մտերմիկ զրույցի արդյունքում պարզում է աշակերտի հետաքրքրությունները և որից հետո էլ առաջարկում է համապատասխան գրականություն:

Գրականության ցանկ

Հայ գրողներ

1. Ղ. Աղայան, հեքիաթներ և զրույցներ՝ Օձամանուկ և արևահատ, Անտառի մանուկը, Վաճառականի խիղճը, Խիզախը կամ աներկյուղը, Հնարագետ ջուլիակը, Մանուկ-խան, Մանկական աշխարհայացք կամ լույս ու մութ աշխարհները, Կախարդական պատկեր, Մկների ժողովը:

2. Հ. Թումանյան, պատմվածքներ՝ Արջաորս, Գաբո բիձու շերամապահությունը, Երկու հայր,

3. Հ. Թումանյան, հեքիաթներ՝ Անհաղթ աքլորը, Պոչատ աղվեսը, Անխելք հիմարը, Խելոքն ու հիմարը, Զախորդ փանոսը,

Ծիտը, Զախչախ թագավորը, Ճամփորդներ, Տերն ու ծառան, Ոսկու կարասը, Խոսող ձուկը, Սուտասանը, Կոնատ աղջիկը, Բարեկենդանը, Քեֆ անողին քեֆ չի պակսիլ, Կացին ախպեր, Եդեմական ծաղիկը, Կիկոսի մահը, Անբան Հուռին, Սուտլիկ որսկանը, Ուլիկը, Քաջ Նազարը, Շունն ու կատուն, Մի կաթիլ մեղրը, Չարի վերջը:

4. Ն. Գամբարյան, հեքիաթներ՝ Երեք Վեներանների մոլորակը , Բզզացող արջուկը:

5. Վ. Բուռնուչյան, հեքիաթ՝ Ձմեռ պապիկն ու իր օգնականները:

6. Վ. Սարոյան առակներ

7. Վ. Սարոյան, առակ Խելացի տղայի և թագավորի մասին

8. Յոթ խրատական հեքիաթ:

9. Վ. Այգեկցի, առակներ՝ Իշխանավոր և իմաստուն, Երկու նկարիչ, Աղվեսը և թղթատար գայլը:

Հ. Թումանյանի թարգմանած հեքիաթները

1. Երեք արջի հեքիաթը Լև Տոլստոյ
2. Փոքրիկ ձկնորսը (Ճապոնական)
3. Լեզուն կտրած ծիտիկը (ճապոնական)
4. Գորտը (Գրիմ եղբայրներ)

Արտասահմանյան գրականություն

1. Չիպոլինոյի արկածները
2. Ջաննի Ռոդարի, հեքիաթներ՝ Մուկը, որ կատու էր ուտում , Երիտասարդ խեցգետնի մասին,Պապիկը, որ չէր կարողանում հեքիաթ պատմել
3. Գրիմ եղբայրներ, հեքիաթ՝ Նապաստակն ու ոզնին
4. Ս. Կոզլով, հեքիաթ՝ Ոզնի-տոնածառը
5. Օ. Գավրինցևա, հեքիաթ՝ Փոքրիկ պանդան, Ինչպես առաջացան թիթեռների թևերը
6. Լեհական ժողովրդական հեքիաթ՝ Առյուծը և ջութակահարը
7. Վրացական հեքիաթ՝ Դատավոր աղվեսը
8. Ռուսական ժողովրդական հեքիաթ՝ Կատուն ու աղվեսը
9. Քեյլ Վիլ, հեքիաթ՝ Ինչպես օգնեցին Ձմեռ պապիկին
10. Յ. Սպայրի, պատմվածք՝ Հայդի
11. Ջաննի Ռոդարի, հեքիաթ-վիպակ՝ Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում
12. Շառլ Պերռո, հեքիաթ՝ Կարմիր գլխարկ
13. Վլադիմիր Սուտեև, հեքիաթ՝ Կամակոր կատուն
14. Էգոն Մատիսեն, հեքիաթ՝ Կապույտ աչքերով կատուն

Հնդկական ժողովրդական հեքիաթներ

1. Հիմսուքա
2. Փերիումը և Քեչբան
3. Երախտամոռ առյուծը
4. Բանիան և ջաթը
5. Փորձություն
6. Գոռոզ թագավորը
7. Ժլատ Բալու Շահը
8. Յոթ աստղեր
9. Նապաստակի և փղի մասին

2. Կազմակերպում է արտադասարանային աշխատանքներ՝ ընտրված ստեղծագործության բարձրաձայն խմբային ընթերցանություն: Բարձրաձայն ընթերցանությունը կազմակերպվում է գրադարանում դասերից հետո՝ 45 րոպե տևողությամբ, աշակերտների խմբերով (օրինակ՝ 2-րդից 4-րդ դասարանների աշակերտները՝ ամիս 1 անգամ որևէ հեքիաթ կամ փոքր պատմվածքի ընտրությամբ): Սկզբում համատեղ կամ գրադարանավարի առաջարկով կատարվում է ստեղծագործության ընտրություն, այնուհետև ստեղծագործությունը բաժանվում է մասերի, և աշակերտներն սկսում են բարձրաձայն ընթերցել իրենց հատկացված պարբերությունները: Բարձրաձայն կարդում են ստեղծագործությունը, որին հաջորդում են ընթերցողի մեկնաբանությունները և կարդացածի քննարկումը: Բարձրաձայն կարդալը զարգացնում է խոսքը, օգնում է հիշողությանը, թե ինչպես ճիշտ արտասանել բառերը, որտեղ դնել իմաստային շեշտը: Այնուհետև կարելի է քննարկել կարդացածը, պատասխանել երեխաների հարցերին: Այսպիսով, բարձրաձայն կարդալը զարգացնում է երեխայի մտածողությունը, հմտությունը՝ տրամաբանորեն մտածելու, գտնելու տեքստում ամենակարևորը և հետաքրքիրը:

2.1. Որպեսզի գրքի հետ հանդիպումը լինի բեղմնավոր, անհրաժեշտ է գրադարանավարին լրջորեն նախապատրաստվել, որը ներառում է մի քանի փուլ՝

➢ գրքի ընտրություն,

➢ արտահայտիչ ընթերցման նախապատրաստում՝ տեքստի ուսումնասիրում և նախնական ընթերցում,

➢ հարցերի կազմում ընթերցվող գրականության և ստեղծագործական առաջադրանքների քննարկման համար, բացատրություններ անհասկանալի բառերի, արտահայտությունների վերաբերյալ,

➢ պարագաների (աքսեսուարների) հավաքում, եթե դա կարելի է և նպատակահարմար է:

Ի՞նչ կարդալ: Ինչպե՞ս ընտրել գրքեր կարդալու համար:

➢ Ընտրված գիրքը պետք է առաջացնի հուզական զգացումներ երեխաների մոտ, կարդացածին վերադառնալու ցանկություն,

➢ լինի հեքիաթ կամ փոքրիկ պատմություն, որը բաժանված լինի գլուխների, և որը պետք է կարդալ և քննարկել սահմանափակ ժամանակում,

➢ գեղարվեստական տեսանկյունից լինի հարուստ,

➢ բովանդակությունը համապատասխանի աշակերտների հետաքրքրություններին,

➢ համապատասխանի երեխաների որոշակի զարգացման տարիքին:

Որքա՞ն կարդալ:

➢ Ընթերցանության տևողությունը կախված է երեխաների տարիքից: Նախադպրոցական տարիքի երեխաներն ու առաջին դասարանցիները շուտ են հոգնում, նրանց ուշադրությունը դժվար է պահել, ուստի նրանց համար կարդալը չպետք է տևի ավելի քան 30-35 րոպե, այնինչ՝ 2-րդից 4-րդ դասարանների աշակերտները ավելի շատ են կարողանում երկար ժամանակով լսել:

➢ Մեր բարձրաձայն ընթերցումները օրինակ և չափանիշ են երեխաների համար: Կրտսեր դպրոցականները լսում են արտահայտիչ կարդալը և սկսում են այլ կերպ կարդալ, ավելին՝ արտահայտիչ կերպով օգտագործել դադարները, փոխանցել երկխոսության մեջ կերպարների բնույթը:

3. Ընթերցանության կազմակերպում բնության գրկում: Կարդում ենք գրքեր բնության գրկում՝ բնության, կենդանիների մասին: Անչափ կարևոր է ընթերցանությանը նպաստող միջավայրը, օրինակ՝ դա կարող է լինել բուսաբանական այգի, կենդանաբանական այգի, գետի կամ լճակի ափ, բնություն ցանկացած վայր, որտեղ կարելի է կազմակերպել անվտանգ ընթերցանություն: Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողականությունը: Երեխաների մտքի և զգացմունքների վրա ներգործություն ունենալու նպատակով էական նշանակություն ունեն ընթերցանությունից հետո անցկացվող զրույցները: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն անդրադառնալ գրքի բովանդակությանը, այլև զարգացնում է երեխայի խոսքը և հարստացնում բառապաշարը: Տարվա տաք և հաճելի եղանակին կարելի է կազմակերպել գրադարանի պատերից դուրս հետաքրքիր և արդյունավետ ընթերցանություն բնության գրկում: Նման հավաքների նպատակն է ընթերցանությունը դարձնել տեսանելի, պատկերավոր և առավել ընկալելի:

4. Կազմակերպում է գրական ունկնդրումը առաջին դասարանցիների համար: Առաջին դասարանցու համար ինքնուրույն ընթերցանությունը բարդ աշխատանք է, ուստի այս տարիքում երեխաները նախընտրում են ունկնդրել գեղարվեստական ստեղծագործությունը և ոչ թե՝ ընթերցել: Գրադարանավարը պետք է այնպես վարի գրական ունկնդրումը, որ երեխաները չհայտնվեն պասիվ ունկնդրի դերում: Այսինքն՝ գրադարանավարը գրական ստեղծագործություն ընթերցելիս օգնում է նրանց հասկանալ և վերլուծել տեքստի հիմնական բովանդակությունը: Այսպիսով, գրական ունկնդրումը ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ պետք է ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր, որը նպաստելու է երեխային՝ առանց սխալվելու վախի արտահայտելու իր մտքերը: Ունկնդրման համար անհրաժեշտ է ընտրվող գրականությունը լինի՝

➢ մատչելի, հետաքրքիր բովանդակությամբ, ոչ ծավալուն, զարգացող սյուժեով,

➢ բնության, կենդանիների, շրջակա միջավայրի մասին,

➢ հայ և արտասահմանյան մանկական գրականություն:

Երեխաների գրական ստեղծագործության ունկնդրումը նպաստում է խոսքի, երևակայության, մտածողության զարգացմանը: Ձևավորում է կենդանիների, շրջակա բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, կարդացածի վերաբերյալ կարծիք արտահայտելու կարողություն: Իսկ հեքիաթները, մանկական պատմվածքները, բանաստեղծությունները զարգացնում են հաղորդակցվելու կարողությունները, մարզում են երեխայի միտքը, սովորեցնում են խոսել գրական հայերենով: Գրական ունկնդրումը կարելի է կազմակերպել դասերի ավարտից հետո գրադարանում շաբաթը 1 անգամ՝ 30-40 րոպե տևողությամբ:

5. Կազմակերպում է մրցույթ՝ «Լավագույն ընթերցող» մրցանակով, ստեղծում տեսանյութ՝ տեղադրելով համապատասխան կայքէջում: Շատ երեխաներ դժկամությամբ են կարդում պոեզիա և չեն սիրում այն: Լավագույն բանաստեղծություններից բարձրաձայն ընթերցելը կօգնի նրանց սեր առաջացնել դեպի պոեզիան:

Այս ուղղությամբ գրադարանում տարվող աշխատանքներից մեկն էլ դասերի ավարտից հետո ամիսը 1-2 անգամ աշակերտների համար մրցույթ կազմակերպելն է: Նախատեսվում է ընթերցողների համար մրցույթ անցկացնել «Լավագույն ընթերցող» մրցանակով: Նրանք տեսանյութեր կունենան, և դրանք կտեղադրվեն համապատասխան կայքէջում:

6. Կազմակերպում է գրքի քննարկում՝ համագործակցելով ուսուցչի հետ: Գրքի քննարկումը հավաքական զրույց է, որի ընթացքում ընթերցողները կիսում են իրենց կարծիքը կարդացածի վերաբերյալ, գնահատում գրքի հերոսների գործողությունները: Նման խոսակցության կրթական արժեքը շատ մեծ է: Գրքի քննարկումը թիրախավորման լավ միջավայր է ուշադիր, մտածված ընթերցման համար. դա ստիպում է գիրքը հետաքրքրությամբ կարդալ: Երեխաները սովորում են արտահայտվել հետևողականորեն և համոզիչ կերպով: Խմբային զրույցը հաճախ հակասություններ է առաջացնում, ստիպում է փնտրել և գտնել ամենաանհրաժեշտ փաստարկները:

Կարելի է համագործակցել և՛ գրականության, և՛ ռուսաց լեզվի ուսուցիչների հետ: Բոլորի դեպքում սկզբունքը նույնն է. ուսուցիչը և գրադարանավարը նախապես ընտրում են որևէ ստեղծագործություն, այնուհետև ուսուցիչը նախապատրաստում է աշակերտներին՝ որոշակի տեղեկություն տալով ընտրված ստեղծագործության վերաբերյալ, հետո հանձնարարվում է աշակերտներին կարդալ այդ ստեղծագործությունը, այնուհետև դասերից հետո գրադարանավարի հետ շաբաթը 1 անգամ՝ 45 րոպե տևողությամբ, քննարկումներ են կազմակերպվում գրադարանում:

«Զրույց կարդացածի մասին»: Սրանք հարցերի պատասխաններ են, անհասկանալի բառերի վելուծություն, նկարազարդումների և տեսանյութերի դիտում: Երեխայի հետ գրքի մասին խոսելը չպետք է կրթող լինի: Կարող եք օգնել երեխային բացահայտել տեքստի ամբողջ խորությունը, բայց ավելի լավ է եզրակացությունները թողնել իրեն, օրինակ՝ կատարելով հետևյալ հարցադրումները. ինչի՞ մասին է այս ստեղծագործությունը, ինչո՞ւ է այդպես կոչված, ինչո՞վ է այս գիրքը տարբերվում մյուսներից, ո՞րն է գրքի

իմաստը: Նշյալ հարցադրումները օգնում են աշակերտին տեսնել թաքնված գեղարվեստական բովանդակությունը:

Խմբային աշխատանքների ժամանակ կարելի է կատարել նաև ստեղծագործական առաջադրանքներ, որոնք կարող են լինել գրական, նկարչական: Ահա մի քանի օրինակներ, որոնք տալիս են ստեղծագործական առաջադրանքների գաղափար. «Նկարի՛ր հերոս՝ ըստ գրական դիմանկարի», «Նկարե՛ք բնապատկեր՝ ըստ գրքի տեքստի նկարագրության»: Կրտսեր տարիքի երեխաները հաճույքով են նկարում, ուստի թող նկարեն այն, ինչ ուզում են, այն ինչ ծնվել է նրանց հոգում՝ որպես կարդացած գրքի արձագանք: Նկարչությունը օգնում է նրանց վերապրել կարդացածը, վերականգնել ամեն ինչ հիշողության մեջ: Օրինակ՝ առաջարկեք նկարել իրենց ընկալմամբ պատմության ամենակարևոր դրվագը և բացատրել իրենց ընտրությունը, ստորագրել նկարը՝ մեջբերում անելով տեքստից:

Կարող եք կազմակերպել աշխատանքներ, որտեղ երեխաները պետք է մտածեն ու պատրաստեն հեքիաթի զգեստ, հորինեն հերոսուհու անուն, կազմեն պատմություններ՝ հիմնված բառերի վրա, կարդան ստեղծագործության հատվածներ ըստ դերերի՝ ցուցադրելով իրենց գեղարվեստական ունակություններն ու երևակայությունը: Այդպիսով՝ երեխաները ձեռք են բերում տեքստի վրա աշխատելու փորձ՝ ձևակերպելով և արտահայտելով իրենց տեսակետը:

7. Կազմակերպում է հեքիաթի բեմականացում՝ համագործակցելով ուսուցչի հետ: Բարձրաձայն ընթերցման հիմնական նյութը տրվում է ժողովրդական հեքիաթներով, որոնք սիրում են բոլոր երեխաները: Կարելի է երեխաներին մոտիվացնել՝ ասելով նրանց, թե ինչ առաջադրանքներ պետք է կատարեն հեքիաթ լսելուց հետո: Հեքիաթը բեմականացնելու նպատակով ուսուցչի հետ կատարել կերպարների վերլուծություն, աշակերտների հետ՝ հավանած հերոսի ընտրություն: Եռամսյակը 1 անգամ աշակերտները գրադարանում կարող են բեմականացնել որևէ հեքիաթ:

8. Կազմակերպում է մրցույթ՝ «Լավագույն հեքիաթասաց» մրցանակով: Գրադարանավարը, որպեսզի մոտիվացնի երեխաներին, կարող է կազմակերպել հեքիաթասացի մրցույթ: Ամբողջ դասարանին նախօրոք հանձնարարում է որևէ հեքիաթ տանը պատրաստել, իսկ գրադարանում այն բաժանվում է հատվածների, և աշակերտներն սկսում են ներկայացնել իրենց հատկացված պարբերությունները: Վերջում ընտրվում է այն աշակերտը, ով կարողանում է սահուն և հասկանալով պատմել իրեն տրված հատվածը՝ պարգևատրվելով «Լավագույն հեքիաթասաց» մրցանակով: Այն կարելի է կազմակերպել եռամյսակը մեկ: Նպատակն այն է, որ կարդան ավելի ուշադիր և կարողանան ճիշտ ներկայացնել կարդացածը:

9. Սովորեցնում է ընթերցանության տեխնիկան: Գրադարանավարը, երեխաների համար գրական ստեղծագործություն ընթերցելիս տեքստը կարդալով ու վերլուծելով, նրանց հետ կիսում է այն զգացումները, որոնք ունեցել է դասին պատրաստվելիս և փորձում առաջացնել համապատասխան հուզականություն, օգնում հասկանալ աշխատանքի հիմանական գաղափարը, ինչպես նաև՝ իր օրինակով առավել արդյունավետ

սովորեցնում ընթերցանության տեխնիկան: Ահա այն կարևոր փուլերը, որոնք անհրաժեշտ են գրադարանավարին բարձրաձայն ընթերցելիս՝

➢ Կարդալ դանդաղ, արդյունավետ խոսակցության տեմպով, որպեսզի տեքստը չվերածվի շուտասելուկի:

➢ Բառերը հստակ արտասանել, որպեսզի յուրաքանչյուր բառ հասկանալի լինի, հետո՝ արտահայտիչ և դասավորված՝ շեշտադրումներով և դադարներով:

➢ Հնարավորության սահմաններում գեղարվեստորեն արտասանել կերպարների անմիջական խոսքը՝ օժտելով նրանց որոշակի բնավորությամբ:

➢ Շատ կարևոր է տեքստը արտասանել ոչ թե ընթերցման տոնով, այլ այնպես, իբր դու արտահայտում ես քո սեփական մտքերը, կարծես պատմում ես: Ընթերցանությունը պետք է լինի պարզ և արտահայտիչ: Լավ ընթերցանությունը ճշմարիտ և անկեղծ մեկնաբանելն է տեքստը՝ բացառելով ավելորդ թատերականությունը:

➢ Կարիք չկա «միջոցառում անցկացնել», կարդացե՛ք այնպես, կարծես ինքներդ եք առաջին անգամ կարդում: Երեխաները զգում են կեղծը ու չեն հավատում:

➢ Եթե գրքում ինչ-որ վատ կամ սարսափելի բան պատահի, և դուք ժպտաք, ապա երեխան կարող է նույնականացնել ձեզ հիմնական չարագործի, բացասական կերպարի հետ:

Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս՝ ընթերցանության ավարտից հետո, կարելի է այն բանավոր վերլուծել, քննարկել ավելի հիշվող դարձնելու համար: Այսպիսի ընթերցանություն կարելի է կազմակերպել ամիսը 1 անգամ՝ դասերի ավարտից հետո, 45 րոպե տևողությամբ: Գրադարանավարը պետք է ընտրի այնպիսի գեղարվեստական գրականություն, որ լինի մատչելի և հետաքրքիր բովանդակությամբ, դինամիկ զարգացող սյուժեով: Նման ընթերցանությունը նպաստում է խոսքի, երևակայության և մտածողության զարգացմանը:

10. Կազմակերպում է գրական խաղեր: Գրադարանավարը գրական խաղի ժամանակ դպրոցականների մոտ զարգացնում է գիրքը ուշադիր կարդալու, մեջբերումները ճիշտ ընտրելու, գրքի և նրա հերոսների վերաբերյալ իրենց կարծիքը ողջամտորեն պաշտպանելու ունակությունը՝ այն հաստատելով կոնկրետ փաստերով: Գրադարաններում կան գրքեր, որոնք կարելի է ոչ միայն կարդալ, այլև դրանցով խաղալ՝ Տ. Էնթոնի «Որտե՞ղ են նրանք» շարքից գրքեր, ինչպես նաև հանելուկներով, ռեբուսներով, խաչբառերով գրքեր: Ամիսը 1-2 անգամ գրադարանում գրական խաղերի միջոցով կարելի է հիշել սիրված գրքերից մեջբերումները, կարելի է նաև հորինել սեփական հանելուկը, խաչբառը, վիկտորինան՝ հիմնված նախընտրած գրքի վրա, և հանելուկ ասել ընկերներին:

11. Կազմակերպում է վիկտորինաներ՝ ընթերցված գրքերի շուրջ: Կարելի է նաև վիկտորինաներ հորինել ընթերցված գրքերի շուրջ: Վիկտորինայի միջոցով ստուգվում են աշակերտների գիտելիքները տարբեր բնագավառների վերաբերյալ, հարցերին գրավոր կամ բանավոր պատասխանելու խաղ՝ զբաղմունքով: Ամիսը 1 անգամ կարելի է

գրադարանում կազմակերպել վիկտորինաներ կրտսեր դասարանների աշակերտների հետ:

12. Համագործակցում է ծնողների հետ: Ծնողների և գրադրանավարի համագործակցության համար անհրաժեշտ է, որ գրադարանավարը ևս մասնակցի ծնողական ժողովներին: Համագործակցության նպատակը լիարժեք տեղեկատվության տիրապետումն է երկու կողմերի համար՝

1. ընթերցած գրականության ցանկ, 2. գրական նախասիրություններ, 3. Զբաղվածություն:

Իմաստն այն է, որ երկու կողմերն էլ իմանան, թե ինչ գրքեր առաջարկել երեխային և ինչ գրական ստեղծագործություն քննարկել: Ծնողներին կարելի է նաև ուղղորդել, թե տանը ինչպես կազմակերպել երեխայի հետ ընթերցանությունը՝

➢ թող ձեր երեխան հասկանա, որ ընթերցանությունը մեծ հաճույք է: Ձեր անձնական օրինակն առավել արդյունավետ կլինի: Կարդացե՛ք ինքներդ: Ձեր երեխային ասեք, թե ինչի մասին է գիրքը: Երեխաները սիրում են ընդօրինակել մեծահասակներին:

➢ Նույնիսկ այն ժամանակ, երբ ձեր երեխան սովորում է կարդալ, հնարավորինս մի՛ դադարեք նրա համար բարձրաձայն կարդալ: Մեծահասակի արտահայտիչ ընթերցանությունը կօգնի բառերը կապել իր պատկերացմամբ առաջացող պատկերների հետ: Մեծահասակը կարող է օգնել երեխային հասկանալ տեքստը՝ բացատրելով անծանոթ բառերի և արտահայտությունների իմաստը և պատասխանելով հարցերին:

➢ Գիրքը կարդալուց հետո մի՛ մոռացեք դրա մասին: Հրավիրե՛ք երեխային ավարտել պատմությունը՝ պատկերացնելով իրեն հերոսների տեղում և գտնել իրավիճակի իր սեփական լուծումը: Այսպիսով՝ թող այն դառնա քննարկման, տպավորությունների փոխանակման առարկա:

➢ Մի՛ փորձեք հեռուստացույցը կամ համակարգիչը փոխարինել գրքով: Պարզապես կարգավորե՛ք հեռուստացույց դիտելու և համակարգչային խաղեր խաղալու ժամանակը:

➢ Կարող եք շաբաթը 2-3 անգամ երեկոյան ժամերին կազմակերպել ընթերցանության մեկ ժամ: Այդ ժամին անջատվում է հեռուստացույցը, համակարգիչը, և ընտանիքի բոլոր անդամները կարող են մասնակցել միջոցառմանը:

13. Համագործակցում է Խնկո-Ապոր անվան ազգային մանկական և այլ գրադարանների հետ, կազմակերպում այցելություններ գրադարաններ: Տարվա մեջ 1 անգամ այցելություն գրադարաններ, հեքիաթի դիտում, ծանոթություն գրադարանի բաժիններին և ձայնադարանին, մասնակցություն ցուցահանդեսներին, քննարկում ստացած տպավորությունների մասին: Նպատակը՝ ցույց տալ երեխաներին, թե ինչքան բազմաժանր կարող են լինել գրքերի աշխարհը՝ ծանոթանալով այդ հետաքրքիր ու տրամադրող մթնոլորտին:

14. Կազմակերպում է ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, մանկական գրքի ընթերցումներ հեղինակների, դերասանների, համայնքի ներկայացուցիչների, ուսուցիչների կողմից: Դպրոցի գրադարանում միջոցառումները, որոնք կարող են նվիրված լինել որևէ հեղինակի (օրինակ՝ Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Գրիմ եղբայրների և այլ

մանկագիրների) ծննդյան օրվան նվիրված ընթերցանություն, նոր լույս տեսած գրքի շնորհանդեսի (օրինակ՝ երբ գրքից կարող են կարևոր ու հետաքրքիր հատվածները ծաղկաքաղ անել և կարճ տարբերակով ներկայացնել գրքի բովանդակությունը) կամ հեքիաթների ընթերցանությունը կարող են անցկացնել նաև այն անձինք, ովքեր կարող են հետքրքրություններ առաջացնել երեխաների մոտ՝ իրենց ասմունքով կամ ընթերցանությամբ: Ճանաչված մարդկանց հետ համագործակցության նպատակը հետևյալն է՝ ցույց տալ երեխաներին, որ յուրաքանչյուր հաջողակ մարդ իր դիրքին, աշխատանքին հասել է կարդալու, սովորելու շնորհիվ: Կարելի է կազմակերպել միջոցառում գիրք նվիրելու օրը, որի ժամանակ երեխաները կարող են ներկայացնել նաև իրենց իսկ ստեղծագործությունները, նվիրել իրենց ընկերներին կամ ուսուցիչներին հավաքած գիրք-տետր կամ հնարավորության դեպքում՝ տպագրած գիրք՝ գեղեցիկ նկարազարդումով:

15. Համագործակցում է հրատարակչությունների հետ, կազմակերպում այցելություններ գրախանութներ: Գրադարանավարը համագործակցում է տարբեր հրատարակչությունների հետ, որի արդյունքում աշակերտները տարին 1-2 անգամ ուսուցիչների ուղեկցությամբ այցելում են հրատարակչություն կամ գրախանութ, կազմակերպում հանդիպում գրողների, ստեղծագործող մարդկանց հետ, օրինակ՝ նկարիչի, դերասանի, երգչի, այլ մասնագետների, նաև՝ պաշտոնյաների հետ, ինչպես նաև կազմակերպում համատեղ միջոցառումներ:

Նման նախագծերի նպատակը զրույցների, հարց ու պատասխանի միջոցով ոչ միայն աշակերտների ծանոթացումն է տվյալ անհատի անձնական և ստեղծագործական կյանքին, ստեղծագործություններին կամ մտորումներին, այլ նաև պատկերացում կազմելը տվյալ մարդու մասնագիտության, մասնագիտական գաղտնիքների մասին:

Հրատարակչություններ այցելելուց հետո նախագծվում են միջոցառումներ կազմակերպելու գաղափարներ: Գրադարանավարը գրախանութների հետ համատեղ տարին 1-2 անգամ կազմակերպում է, օրինակ՝ նոր լույս տեսած գրքերի շնորհանդեսներ կամ համատեղ անցկացվում են խաղեր՝ վիկտորինաների, խաչբառերի տեսքով: Օրինակ՝ հրավիրված մանկագիրը նախօրոք ընթերցվող թեմայի վերաբերյալ պատրաստում է խաչբառ և բաժանում աշակերտներին, իսկ որպեսզի նրանք կարողանան ճիշտ լրացնել այն, պետք է ուշադիր լսեն հեքիաթը, հիշեն բարի և չար հերոսների անունները և այլն: Նման միջոցառումների նպատակն է ծանոթանալ ոչ միայն նոր հեքիաթին կամ ստեղծագործությանը, այլ նաև խաղերի միջոցով զարգացնել երեխայի ուշադրությունը, հիշողությունը և կենդանի դարձնել շփումը մանկագիրների հետ:

Գրողների հետ հանդիպումը կազմակերպել գրախանութներում և գրադարանում, որի ընթացքում տեղի կունենա նոր տպագրված գրքի քննարկում, ինչպես նաև կընդլայնվի աշակերտների հասկացողությունը՝ «Ո՞վ է գրողը», «Ինչու՞ է գրում», «Ի՞նչ և ինչպե՞ս է խոսում գրականությունը», «Ինչպե՞ս է ստեղծվում գրականությունը»՝ արտահայտելով մարդկության փորձը, աշխարհի գեղեցկությունը՝ բազմազան զգացումներով և բառերով: Այս հանդիպումները ավելի կենդանի են դարձնում կապը գրողի հետ:

Նմանատիպ հանդիպումներ կարելի է կազմակերպել յուրաքանչյուր եռամսյակի վերջում:

16. Տարվա վերջում կազմակերպում է կարդացած գրքերի ամփոփում: Գրադարանավարը կազմակերպում է ամփոփիչ հանդիպում՝ քննարկելու համար երեխաների հետ արդեն իսկ ընթերցված ստեղծագործությունները, պարզաբանելու, թե որ ստեղծագործությունը, գիրքը կամ հեղինակն է հավանության արժանացել երեխաների կողմից: Երեխաների հետ ամփոփիչ հանդիպման նպատակն է՝ հասկանալու, թե ինչ տեսակի ստեղծագործություններ են հետաքրքրում՝ ուղղորդելով դասվարին առանձնացնելու գրքերի այնպիսի ցանկ, որը կհամապատասխանի երեխաների հետաքրքրություններին, ինչն էլ կնպաստի ամառային արձակուրդներին ընթերցանության շարունակական գործընթացին:

➢ **Ծնողների հետ համագործակցությունը**

● Կազմակերպում է ծնողավարության ժամ՝ «Որակյալ ընթերցումից՝ որակյալ կրթություն» թեմայով, առաջարկում ընտանեկան ընթերցանության գրականության ցանկ:

● Կատարում է «Երեխաների տեղեկատվական անվտանգությունը» թեմայով համացանցից օգտվելու, գրքեր կարդալու կանոնների իրազեկում:

● Ստեղծում է «Կարդում է ծնողը» ժամանակացույց. ծնողներին ներգրավում է ընթերցանության դասերին՝ որպես ընթերցողներ:

● Գնահատում է տնային ընթերցանության արդյունքները՝ տալով հետադարձ կապ:

● Կազմակերպում է արձակուրդների ընթացքում ընթերցանության ցանկի ներկայացումը՝ «Հարյուր սիրելի գիրք» վերտառությամբ:

Աջակցություն ծնողներին

Ինչպե՞ս սերմանել երեխայի մոտ հետաքրքրություն ընթերցանության հանդեպ

Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի (Ադիսոն):

Այս հարցը միշտ անհանգստացնում է և՛ ծնողներին, և՛ ուսուցիչներին: Ի՞նչ է անհրաժեշտ երեխային հաճույքով ու սիրով կարդալու համար: Ինչպե՞ս առաջացնել և զարգացնել ցանկություն կարդալու հանդեպ: Իհարկե, չկան պատրաստի բաղադրատոմսեր, որոնք կսովորեցնեն ձեզ կարդալ սիրել սովորեցնել երեխային, սակայն կան մեթոդներ, փորձված հնարներ ու միջոցներ, որոնց կիրառմամբ դուք կկարողանաք երեխային մղել ընթերցանությանը՝ այն առավել հետաքրքիր դարձնելով: Ուզո՞ւմ եք, որ ձեր երեխաները կարդան, լինեն հաջողակ: Սովորեցրե՛ք նրանց սիրել կարդալը:

1. Ընթերցանության համար ժամանակ տրամադրե՛ք ամեն օր: Կարդալ անհրաժեշտ է սկսել երեխայի կյանքի առաջին տարուց: Ընտրե՛ք հարմար վայր, հետևե՛ք, որպեսզի գրքի վրա լույսն ընկնի ձախ կողմից: Կարդալով երեխայի համար՝ դուք ընդլայնում եք նրա աշխարհայացքը, օգնում նրան սիրել ընթերցանությունը, հարստացնում բառապաշարը: Երեխան, հետևելով ձեր օրինակին, սովորում է լսել, թերթել էջերը, մատը ձախից աջ շարժել, անգիր անել լսած նոր բառերը: Երեխաները սիրում են լսել

ծնողների մշտական ընթերցումները, այլ ոչ թե՝ դեպքից դեպք: Միշտ հիշե՛ք, որ երեխաների համար ընթերցել կարող են նաև տատիկն ու պապիկը, ավագ եղբայրը կամ քույրը, հորեղբայրը կամ մորաքույրը, ընտանիքի ցանկացած անդամ:

2. Օգտվե՛ք գրադարանից: Հաճախակի ընթերցելով երեխայի համար, երեխայի հետ՝ անպայման կզգաք, թե ինչպիսի գրքեր են նրան դուր գալիս, որոնք է նա ավելի լավ հասկանում: Դիմե՛ք գրադարանի և գրադարանավարի օգնությանը՝ համապատասխան գրքեր ընտրելու հարցում: Գրադարանում բնականաբար կա գրականություն ցանկացած տարիքի և զարգացման մակարդակի համար, բացի այդ, մասնագետներին ավելի հեշտ է գտնել պահանջված գիրքը: Հաճախ ծնողների սխալ կարծիքն է, որ երեխայի ընթերցանության գրքերը պետք է ունենան տնային գրադարանում, և դա բոլորովին չի ենթադրում, որ ընտանեկան գրադարանը ավելի բազմազան լինել չի կարող: Գրադարանից օգտվելիս երեխային կարող է ոգևորել գրադարանում ուրիշ երեխաների ներկայությունը, գրադարանի ընթերցասրահում միասին գտնվելով՝ երեխան կարող է ընդօրինակել մյուս երեխաներից: Սա շատ կարևոր հանգամանք է «Փոքրիկ ընթերցող» ձևավորման գործընթացում: Այն նաև նպաստում է սիրել գրքերի բազմազանությունը և ընտելանալ գրադարանին, դրսևորել մեծահասակների և երեխաների ընթերցանության վարքագիծ, ինչն էլ դրականորեն կազդի երեխայի կյանքի ու ուսման վրա: Գրքերի աշխարհը՝ գրադարանը, նրանց համար անհայտ աշխարհ չի լինի: Գրադարանի առավելությունը ցույց տալով ու այն զուգակցելով «**Շատ հետաքրքիր գրքեր կան, որոնք կարող ես ինքդ կարդալ»** խթանիչ նախադասությամբ՝ դրական մեծ ազդեցություն կարող են թողնել երեխայի վրա:

3. Շրջապատե՛ք երեխային ընթերցանության նյութերով: Ինչպիսի՞: Ամենից առաջ այնպիսի, որոնք նա կարող է ոչ միայն կարդալ, այլ նաև գունավորել, կտրատել, փոփոխել, անել գրառում էջերում: Այդպիսի գրքերի տեսականին շատ է և զուտ անհատական օգտագործման համար է նախատեսված: Կարող եք անգամ երեխայի հետ ինքնաշեն գրքեր պատրաստել՝ օգնելով սոսնձել, կարել, ամրացնել սեփական գիրքը նկարներով, պատկերներով, բազմազան ուրիշ առարկաներով: Օգնե՛ք գրի առնել այն տեքստը, որը երեխան ցանկանում է տեղադրել իր գրքում: Խրախուսե՛ք երեխայի կատարած ցանկացած աշխատանք՝ գրքի ստեղծման շուրջ: Նրա «սեփական» գիրքը ցո՛ւյց տվեք ընտանիքի անդամներն, կարդացե՛ք նրանց համար:

4. **Կարդացե՛ք դանդաղ և հաճույքով:** Այնքան կարևոր չէ, թե ինչ եք կարդում, այլ թե ինչպես եք կարդում: Արագ և միապաղաղ կարդալիս երեխան կորցնում է իր հետաքրքրությունը: Կարդալիս ցո՛ւյց տվեք ձեր զգացմունքները՝ ինքներդ ստանալով բավականություն: Եղե՛ք դերասան, ասես լինեք «էկրանի աստղ»: Փորձե՛ք կարդալ տարբեր ձայներով՝ կերպարավորելով բնագրի հերոսներին: Դա երեխային անհամեմատ դուր կգա և տպավորիչ կլինի: Ընթերցելիս տվեք դադարներ՝ զրուցելով ու նկարները դիտելով, ինչի պարագայում երեխային մտածելու ժամանակ կլինի իրադրությունները, վայրը, կերպարներին, կարդացածը հասկանալու համար: Հաճախ հարցե՛ր տվեք ու լսե՛ք անպայման նրա պատասխանը, ինքնե՛րդ պատասխանեք երեխայի մոտ առաջացած

հարցերին: Շատ կարևոր է լսել, թե ինչպես է նա պատմում, ներկայացնում իր տպավորությունները կարդացածի շուրջ:

Ընթերցելիս հետևե՛ք երեխային: Երբեմն նոր՝ անծանոթ պատմություն ընթերցելիս երեխան չի ցանկանում ընդհատել ընթերցումը: Հաճախ ցանկանում է նախ՝ նայել նկարները, ճշտել ձեզանից, թե ինչի մասին է գիրքը, նոր միայն՝ կարդալ: Եղե՛ք համբերատար և մի՛ հակառակվեք նրան, ինչը կարող է տհաճություն պատճառել նրան: Ընթերցման բոլոր փուլերը պետք է բերկրանք պատճառեն երեխային: Հիշե՛ք՝ գիրք կարդալը մեծ փորձ և ուսուցման նկատմամբ դրական վերաբերմունքի դրսևորման նախապայման է:

5. Կրկին ու կրկի՛ն կարդացեք: Շատ հաճախ երեխաները սիրում են լսել նույն պատմությունը: Նրանք ստիպում են կարդացած գիրքը կարդալ շատ անգամներ և ձեր կողմից առաջարկված նոր գիրքը կարդալ կամ պատմությունը լսել չեն ընդունում: Ի՞նչ անել այս դեպքում: Սիրելի՛ ծնող, ուշադրություն դարձրու այս կետի վերնագրին: Այո՛, այո՛՝ «Կրկին ու կրկին անգամ կարդալ»: Կարդացե՛ք այն, ինչը երեխան է ուզում, կարդացե՛ք կրկին ու կրկին: Դա բոլորովին կամակորություն չէ: Երեխան այդ կերպ ենթագիտակցորեն ցանկանում է ավելի խորը հասկանալ այդ պատմությունը, նրա ընկալման գործընթացը դանդաղ է ընթանում, նա այդպես հաճույք է ստանում ու հասկանում է ավելի լավ: Նրան մի՛ զրկեք այդ ամենից: Այս քայլով նաև նախապատրաստական աշխատանք է տարվում ուշադիր և մտածված ընթերցանության տարրերի զարգացման շուրջ, դաստիարակվում է ընթերցվածի մասին լիարժեք ընկալման վերաբերմունք:

Թերևս անհաճո է բազմաթիվ անգամներ ընթերցել նույնը: Այդ գործընթացին ներգրավե՛ք ընտանիքի բոլոր անդամներին: Այնպիսի իրավիճակ ստեղծե՛ք, որ երեխային թվա, թե ինքն է կարդում գիրքը, ուրախանա և հպարտանա դրանով: Այնպես որ, եթե տվյալ գիրքը երեխայի մոտ հաճույք է առաջացնում, ապա այն ընթերցե՛ք այնքան անգամ, որքան անգամ երեխան կնախընտրի:

6. **Կարդացե՛ք միշտ և ամենուր:** Կարդալ կարելի է ամենուր, միշտ՝ զբոսնելիս, հերթի սպասելիս, հանգստանալիս: Ձեր պայուսակում մանկական ընթերցանության գիրք թող միշտ լինի: Երբ երեխան կսկսի ճանաչել տառերը և վանկերով կարդալ, խրախուսե՛ք կարդալ ցուցատախտակները, մեծահասակների գրքերի, ամսագրերի վերնագրերը, ձեր աշխատանքային փաստաթղթերը, սրանք բոլորը կնպաստեն ընթերցանության խթանմանը:

7. Երեխային մի՛ ստիպեք կարդալ: Երբեք երեխային մի՛ ստիպեք կարդալ թե՛ ձեզ հետ, թե՛ ինքնուրույն: Սա ամենից գործող տարբերակն է երեխայի մեջ սպանելու հետաքրքրությունը ընթերցանության և ընդհանրապես ուսման հանդեպ: Չի ցանկանում, հանգի՛ստ թողեք նրան կամ մոտիվացրե՛ք, հետաքրքիր մոտեցումնե՛ր առաջարկեք ընթերցելու համար: Կարդալ ստիպելով՝ ճանապարհ է ստեղծվում չկարդալու համար ընդհանրապես: Եթե դպրոցական երեխան կարդում է միայն պարզունակ հրապարակումներ, նյութեր, զե՛րծ մնացեք քննադատությունից ու պատժից: Հիշե՛ք՝ նա կարդում է դրանք: Փնտրե՛ք դրական և արդյունավետ եղանակներ՝ ավելի հետաքրքիր ու ավելի

իմաստալից գրքերով նրան հրապուրելուն: Ընտրե՛ք տարիքին ու նախընտրած թեմաներին համապատասխան գրքեր, իսկ այս հարցում ձեզ անմիջականորեն կօգնեն գրադարանավարները:

8. Ցո՛ւյց տվեք երեխային, որ հետաքրքրված եք նրա ընթերցանությամբ: Ընթերցող դաստիարակելու համար չկա ավելի կարևոր բան, քան դաստիարակել սեր դեպի ընթերցանությունը: Սիրելի՛ ծնող, դարձե՛ք գրքերի աշխարհի հիանալի ուղեկցող, քան թե ստուգող և գնահատող՝ թե ինչ և ինչպես է կարդում երեխան: Երբ որևէ գործ եք անում, օրինակ՝ ճաշ եք պատրաստում, երեխային խնդրեք կարդալ ձեզ համար, ու դա թող լինի ոչ թե իր դասը, առաջադրանքը, որը հանձնարարել է ուսուցիչը, այլ որևէ հետաքրքիր պատմություն: Եթե երեխան սխալներ է թույլ տալիս, սակայն այդ սխալները չեն անդրադառնում տեքստի ճիշտ բովանդակության վրա, ապա մի՛ ընդհատեք, թույլ մի՛ տվեք երեխային կորցնել հետաքրքրությունը կարդացածի շուրջ, ինչը նա հատուկ ձեզ համար է անում: Արված սխալին հետո անդրադարձե՛ք: Տվե՛ք նրան այն վստահությունը, որ հետաքրքրում է նրա ընթերցածը, և այն շատ կարևոր է: Երբեք նրան ցույց մի՛ տվեք, որ լսում եք՝ անհրաժեշտությունից ելնելով կամ տնային աշխատանքները ստուգելու համար, անգամ եթե այդպես է: Խրախուսե՛ք նրան բարձրաձայն կարդալ թերթեր, ամսագրեր, հեքիաթներ, հանելուկներ և հասկացրե՛ք, որ նա դա անում է ձեր փոխարեն, քանի որ դուք զբաղված եք:

Չկա ընթերցանությունը խրախուսելու որևէ կոնկրետ միջոց: Դրանք ստեղծե՛ք դուք: Քննարկե՛ք ձեր կարդացածը, հիացե՛ք, ուրախացե՛ք, սարսափե՛ք նրա հետ: Այս ամենը դժվար չէ: Հետևե՛ք այս խորհուրդներին և դուք կկրթեք իրական ընթերցող: Ընթերցող երեխայի համար ավելի հեշտ է դառնում սովորելը: Ընթերցող երեխան կարողանում է կառավարել իր ազատ ժամանակը՝ լցնելով այն ընթերցանությամբ: Ցանկացած տեղեկույթ նա հեշտությամբ կգտնի և ստեղծագործաբար ու քննադատորեն կմշակի դրանք, ու այս ամենն անպայման հաջողության կհասցնի նրան:

Հուշումներ ծնողին

1) Երեխային ընդունե՛ք այնպիսին, ինչպիսին կա, հնարավորությո՛ւն տվեք փոխվելու:

2) Դաստիարակե՛ք ընթերցող Ձեր անձնական օրինակով:

3) Մի՛ ստիպեք երեխային կարդալ: Այնպիսի գրքեր ընտրեք ընթերցելու համար, որոնք նախընտրում է երեխան, ու դրանց ընթերցումից հետո լսե՛ք նրա տպավորությունները:

5) Սովորեցրե՛ք երեխային յուրաքանչյուր անծանոթ բառի բացատրությունը փնտրել բառարանում:

6) Ընտանիքում համատեղ ընթերցումները, դրանց վերապատմումները, քննարկումներն ու վերլուծությունը, կարծիքների փոխանակումը ընթերցասեր երեխա դաստիարակելու ամենալավ օրինակներից է:

7) Ձեր մանկության սիրված գրքերի մասին պատմե՛ք երեխային, հետաքրքրությո՛ւն

առաջացրեք դրա նկատմամբ: Վերանայե՛ք ձեր գրադարակը երեխայի մասնակցությամբ: Սիրված գրքերը հիացմունքո՛վ ներկայացրեք:

8) Հանձնարարե՛ք ընտանեկան գրադարանի գրքերի ցանկը կազմել: Փորձը ցույց է տվել, որ փորփրելու ժամանակ հետաքրքրող գրքեր են գտել երեխաները ու սիրով ընթերցել դրանք:

9) Համոզվե՛ք, որ երեխայի ընտրած գիրքը համապատասխանում է նրա տարիքին ու հետաքրքրություն ունի:

10) Եթե փոքրիկ ընթերցողը հետաքրքրված է որևէ թեմայով, ապա խորհո՛ւրդ տվեք համապատասխան գրականության ցանկ: Ստուգե՛ք և համոզվե՛ք, որ իսկապես համապատասխան գիրք է ընկել երեխայի ձեռքը:

- **Մեթոդներ**

Կասիլի մեթոդը: Այս մեթոդը հարմար է կիրառել այն երեխաների ընթերցանությունը խթանելու համար, որոնք արդեն բավական սահուն կարդում են, սակայն չեն սիրում կարդալ: Մեթոդը կիրառելու համար ընտրե՛ք վառ սյուժեով հետաքրքիր տեքստ: Ծնողն այն ընթերցում է ու հանկարծ շատ հետաքրքիր մասում դադարեցնում: Շարունակում է մյուս ծնողը, ու նա էլ է նույն կերպ դադար տալիս՝ հիմնավորոմամբ, որ իրենք շատ զբաղված են, իսկ քանի որ գիրքը շատ հետաքրքիր է, ու կանգ են առել ամենահետաքրքիր մասում, ուստի երեխան ինքնակամ սկսում է ընթերցել գիրքը, գուցե՝ առանց մեծ ոգևորության: Այս մեթոդի մեջ ամենից կարևորն այն է, որ ծնողները պետք է գովեն նրա նախաձեռնությունը և երկրորդ՝ օգնեն: Նա կարդում է մեկ նախադասություն, ծնողները՝ երկու, և այսպես ավարտում են: Այս տեխնիկան, կարդալու հմտությունն ամրապնդելով, վերածում է իմաստալից ընթերցանության:

Դուանսի (մանկական հոգեբան) մեթոդ. I տարբերակ: Մի օր երեխան արթնանալով բարձի տակ գտնում է Կառլսոնի նամակը, որը ընդամենը երկու տող է: Նամակում ասվում է, որ Կառլսոնը սիրում է իրեն և ցանկանում է ընկերանալ, իսկ նրա համար պատրաստած նվերը գտնվում է ինչ-որ տեղ: Երեխան նվերը գտնում է: Երեխան կասկածում է, որ խաղ է, բայց այն իրեն շատ է դուր գալիս: Հաջորդ օրը տղան կրկին նամակ է գտնում, բայց այստեղ նվերի մասին խոսք չկա, ու բավական երկար նամակ է գրված: Նամակում ասվում է, որ Կառլսոնը տղայի համար կրկեսի տոմս էր ուզում թողնել, բայց տեսավ, թե տղան ինչպես է քաշքշում կատվի պոչը, ինչի համար էլ կրկեսի տոմսից զրկվում է: Յուրաքանչյուր օրվա հետ նամակի տեքստի բովանդակությունը ավելի ծավալուն է դառնում, սակայն տղան կարդում է շատ արագ ու սահուն: Տղան կարդում է հաճույքով, ու կարդալու հմտությունն ամրապնդվելով՝ դառնում է իմաստալից ընթերցում:

Դուանսի «Մենք գանձ ենք փնտրում» խաղ-մեթոդ. II տարբերակ: Թաքցրե՛ք գանձը տանը և տան տարբեր վայրերում տեղադրե՛ք գրառումներ: Երեխային պատմե՛ք ծովահենների, գանձերի և գրառումների մասին, որոնք կօգնեն նրան գտնել այդ գանձը: Գրառումներում տեքստը աստիճանաբար շատանում է ու ավելի հետաքրքիր դառնում: Առաջին գրառման մեջ երեխան կարդում է, որ գանձը կարող է գտնել մահճակալի տակ,

ու հենց մահճակալի տակ էլ երեխան պետք է գտնի հաջորդ գրառումը, որը ցույց կտա հաջորդ գրառման տեղը և այսպես՝ շարունակ: Քանի որ մեր նպատակն է, գանձ գտնելով, երեխային կարդալ սովորեցնել, իսկ երեխան խաղում է, ուստի նա չի էլ նկատի, թե ինչպես իր խաղը նպաստեց իմաստալից ընթերցանությանը:

Բարձրաձայն ընթերցանություն

Կարդալու գործողության հիմնական ձևերն են՝ ձայնով և լուռ կարդալը, որոնցից թե՛ մեկը և թե՛ մյուսը մարդու կյանքում իրենց հատուկ տեղն ունեն:

Առերևույթ թվում է, թե ձայնով և լուռ կարդալը միմյանցից տարբերվում են միայն նրանով, որ մի դեպքում ձայնը կամ խոսքի արտաբերումն առկա է, իսկ մյուս դեպքում այն բացակայում է:

Բարձրաձայն կարդալու հիմնական առանձնահատկությունն այն է, որ կարդացողը ոչ միայն իր, այլև ուրիշների համար է կարդում, ուստի նա պետք է կարդա, որպեսզի լսողը կարողանա հասկանալ կարդացածի բովանդակությունը, որպեսզի լսածը նրա մեջ հույզեր ու ապրումներ առաջացնի: Այս առումով՝ ձայնով կարդացողը փաստորեն կարդում է ուրիշների համար, այնինչ լուռ կարդացողը միշտ կարդում է միայն իր համար, հետևաբար ուրիշների համար կատարված այդ ընթերցումը պետք է հնարավորինս արտահայտիչ ու լսողների համար հասանելի լինի, որպեսզի հեղինակի խոհերն ու զգացմունքները փոխանցի նրանց: Այս հանգամանքը մեծապես դժվարացնում է բարձրաձայն ընթերցողի խնդիրը, որովհետև նա ոչ միայն պետք է հետևի կարդացածի մտքին՝ այն ճիշտ հասկանալու համար, այլև միաժամանակ պետք է աշխատի գտնել տվյալ միտքը արտահայտելու ու լսողներին փոխանցելու պատշաճ եղանակը, տոնն ու ձայնի հնչերանգի ձևերը: Իսկ այդ նշանակում է, որ ձայնով կարդացողը բնագիրը պետք է վերլուծի ոչ միայն ըստ բովանդակության, այլև՝ ըստ ձևի, որովհետև արտահայտիչ կարդալու հիմնական նախապայմանը բնագրի վերլուծությունն է ըստ ձևի, սակայն այս դեպքում այն հանդես է գալիս որպես հեղինակի լեզվի առանձնահատկությունների ու արտահայտչական ձևերի ընկալման միջոց:

Բարձրաձայն կարդալ

Ո՞րն է բարձրաձայն կարդալու օգուտը, ինչպես այն ճիշտ իրականացնել:

Ծնողներին ու երեխաներին ինչի՞ վրա է անհրաժեշտ ուշադրություն դարձնել:

Որպեսզի մարդը կարողանա ճիշտ և գեղեցիկ արտահայտվել, անհրաժեշտ է՝ կանոնավոր կերպով զբաղվի ընթերցանությամբ: Օրինակ՝ կարելի է օգտակար խորհուրդներ կարդալ, թե ինչպես լողալ կամ սահել չմուշկներով, բայց առանց փորձի դժվար թե դա ստացվի սովորել: Երբ կարդում ենք մտքում, ընթերցումը շատ արագ է ստացվում: Այդ դեպքում ինչո՞ւ է հարկավոր կարդալ բարձրաձայն, դրանից ի՞նչ օգուտ կա:

Բարձրաձայն կարդալը.

- նպաստում է հիշողության լավացմանը,
- խոսքը դառնում է սահուն, հարթ ու համահունչ,
- զարգանում են հաղորդակցական հմտությունները,
- նվազեցնում է սթրեսազգայունությունը,
- մտածողությունը դառնում է ավելի ակտիվ,
- երեխան ստեղծագործական զարգացում է ունենում,
- երեխան սովորում է կենտրոնանալ,
- շնչառական վարժություն է տեղի ունենում:

Երբ մենք կարդում ենք մտքում, ապա կարող ենք բաց թողնել որոշ ոչ կարևոր պարբերություններ, օրինակ՝ բնության մանրամասն նկարագրությունը: Սակայն ուրիշի համար բարձրաձայն կարդալիս անհրաժեշտ է հստակ պատկերացնել, թե ինչ իմաստ պետք է փոխանցել ունկնդրին:

Խոսքը և մեր մարմինը

Այն, ինչ մենք արտաբերում ենք բարձրաձայն, ուղիղ կերպով կապված է մեր մարմնի վիճակի հետ: Երեխային կարող եք առաջարկել հետևյալ փորձը. նախ՝ անհրաժեշտ է ձեռքերը բարձրացնել վեր, հետո՝ դանդաղ արտասանել թվերը և հերթով ծալել մատները: Այս դեպքում անհրաժեշտ է բարձրաձայն հաշվել մինչև հինգը:

Հաջորդ թիվը հնչեցնելիս մատներն իրենք իրենց են ծալվում: Երբ թիվը բարձրաձայն ենք արտաբերում, ավելի աշխույժ, ապա մատներն սկսում են ավելի արագ ծալվել՝ առանց մտածելու: Երբ սկսենք կամաց արտաբերել՝ ձգելով ձայնավորները, մատները նույն կերպ կսկսեն ծալվել: Երեխային առաջարկեք խոսել արագ ու աշխույժ, իսկ մատները ծալել դանդաղ: Այս փորձով ինքն արագ կհասկանա, որ այդպես չի ստացվում: Խոսքը միշտ համահունչ է մարմնի վիճակի հետ:

Երբ երեխան ասմունքում է, մտքերը նրան կարող են առաջ մղել, բայց այն դիրքով, որով նա ընդունել է ու ասմունքում է, կարող է դանդաղեցնել խոսքը: Սովորողը՝ ձեռքերը մեջքին ծալած, ոտքերը խաչած, երկչոտ կանգնած է գրատախտակի մոտ: Անշուշտ, նման դիրքը շատ տխուր կլինի, ու ունկնդիրն էլ կշեղվի դեպի ավելի հետաքրքիր զբաղմունքի: Հետևաբար ավելի լավ է ձեռքերը խոսքին համահունչ շարժել, որպեսզի նրանք օգնեն գեղեցիկ ասմունքին:

1. Հավելված. տարեկան աշխատանքային օրացույց

Սեպտեմբեր	
Տնօրեն	- Տարեկան պլանում նախատեսում է «Երկրորդ դասարանում ընթերցանության ուսումնասիրություն» աշխատանքային կետը: - Մանկավարժական խորհրդի նիստում կազմակերպում է ուսումնասիրության արդյունքների քննարկում: - Տալիս է հանձնարարականներ արձանագրված խնդիրները վերացնելու համար, կազմակերպում է դասվարների անհրաժեշտ վերապատրաստումներ: - Ընթերցանությունը՝ որպես զարգացման հիմնական ոլորտ, ընդգրկում է դպրոցի զարգացման ռազմավարական ծրագրում:
ՈՒԱԳՏ	- Նկարագրում է երկրորդ դասարանում ընթերցանության ուսումնասիրության աշխատանքների ընթացքը:
Մ/Մ նախ.	- Կատարում է տնօրենի հանձնարարականները՝ արձանագրված խնդիրները վերացնելու համար, կազմակերպում է դասվարների անհրաժեշտ վերապատրաստումներ:
ՄԿԱԳՏ	- ՈՒԱԳՏ նկարագրությանը համապատասխան մշակում է համապատասխան ձևաթղթեր (օգտվում է գրականությունից), իրականացնում է փաստաթղթային ուսումնասիրություններ (թեմատիկ պլան, դասերի պլաններ, սովորողների բնութագրեր), դասալսումներ և սովորողների ընթերցանության ստուգում: - Տեղեկացնում է երկրորդ դասարանում աշխատող դասվարներին ուսումնասիրության ծրագրին, ընթացակարգին տևողությանը և ժամանակացույցին:
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է գործընթացի բոլոր մասնակիցների հետ:

	- Կազմակերպում է կիսամյակի ընթացքում կարդացած գրքի նկարազարդումների միջոցով ներկայացումը սովորողների կողմից (ուսուցչի հայեցողությամբ):
ԴԱԿ	- Տարրական դպրոցի սովորողների մեջ զարգացնում է տարբեր աղբյուրներից օգտվելու մշակույթ. - սովորողները կարողանում են տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ համացանցից, նյութեր քաղել և տիրապետել արագ ընթերցանության մեթոդների և ռազմավարությունների տեխնիկային (օրինակ՝ համայնապատկերային ընթերցանություն և այլն):
Գրադարանավար	- Օգնում է սովորողներին՝ իրենց տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ կատարել գրքի ընտրություն: - Կազմակերպում է արտադասարանային աշխատանքներ՝ ընտրված ստեղծագործության բարձրաձայն խմբային ընթերցանություն: - Ընթերցանության կազմակերպում բնության գրկում՝ ուսուցչի մասնակցությամբ: - Խրախուսման նպատակով կազմակերպում է մրցույթ՝ «Լավագույն ընթերցող» մրցանակով, ստեղծում տեսանյութ՝ տեղադրելով համապատասխան կայքէջում: - Կազմակերպում է գրական ունկնդրումը առաջին դասարանցիների համար:
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ:
Հոկտեմբեր	
Տնօրեն	- Կազմակերպում է աշխատանքներ ամբողջ տարվա ընթացքում մայրենիի ծրագրով նախատեսված ընթերցանության աշխատանքների վերահսկողության և կատարողականի ստուգման համար: - Հանձնարարում է ՈՒԱԳՏ-ին՝ ստեղծել սովորողների ընթերցանության տեխնիկայի ստուգման ժամանակացույցներ:

ՈՒԱԳՏ	- Նպաստում է գեղարվեստական, գիտական, գիտահանրամատչելի ստեղծագործությունների նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացմանը:
Մ/Մ նախ.	- Կազմակերպում է էքսկուրսիաներ տարբեր գրադարաններ՝ ընթերցանությունը այնտեղ կազմակերպելու համար՝ գրադարանավարին ներգրավելով այդ գործընթացում:
ՄԿԱԳՏ	- Իրականացնում է ընթերցանության խրախուսմանն ուղղված՝ աշխատանքային պլանով նախատեսված դասարանային և արտադասարանային աշխատանքները: - Մեթոդական շարունակական աջակցություն է տրամադրում դասվարներին ընթերցողական կարողությունների զարգացումը և ընթերցասիրությունը խթանող արդյունավետ միջոցառումների կազմակերպման նպատակով:
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից - ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է գործընթացի բոլոր մասնակիցների հետ: - Կազմակերպում է «Դասը վարում է գրողը» գրական հանդիպում ժամանակակից գրողների հետ:
ԴԱԿ	- Կազմակերպում է ընթերցանության խրախուսմանն ուղղված արտադասարանային միջոցառումներ, աջակցում կազմակերպիչներին, վերահսկում աշխատանքները:
Գրադարանավար	- Կազմակերպում է գրքի քննարկում՝ համագործակցելով ուսուցչի հետ: - Կազմակերպում է հեքիաթի բեմականացում՝ համագործակցելով ուսուցչի հետ:
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի:

	- Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ:
Նոյեմբեր	
Տնօրեն	- Նախաձեռնում է ընթերցանության արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման և կատարման քայլաշարի կազմումը:
ՈՒԱԳՏ	- Նպաստում է գեղարվեստական, գիտահանրամատչելի ստեղծագործություններից ճիշտ օգտվելու համապատասխան գիտական էթիկայի ձևավորմանը:
Մ/Մ նախ.	- Կազմակերպում է ընթերցանության, ասմունքի, դերային խաղերի և թատերական մրցույթներ, գրքի քննարկումներ:
ՄԿԱԳՏ	- Կազմակերպում է ընթերցանության տեխնիկայի առաջին ստուգումը՝ կիրառելով մշակված գործիքը, վարում է ցուցանիշների գրանցամատյան: - Ստուգման արդյունքները ներկայացվում և վերլուծվում են մեթոդմիավորման նիստի ընթացքում: - Կազմակերպում է սեմինար՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու վերաբերյալ (հնարավորության դեպքում հրավիրում է մեթոդիստի):
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից - ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, - կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով:

	- Համագործակցում է ընթերցանության խրախուսման գործընթացի բոլոր մասնակիցների հետ: - Կազմակերպում է կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին:
ԴԱԿ	- Կազմակերպում է միջոցառումներ՝ կարևորելով սովորողի ընթերցանության հմտությունները՝ ուսումնառական առաջընթաց գրանցելու համար:
Գրադարանավար	- Կազմակերպում է մրցույթ՝ «Լավագույն հեքիաթասաց»՝ մրցանակով: - Սովորեցնում է ընթերցանության տեխնիկան:
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ:
Դեկտեմբեր	
Տնօրեն	- Հանձնարարում է ՈւԱԳՏ- ին՝ վերահսկել ուսուցչի կողմից կիսամյակի վերջում կազմակերպած նկարազարդ գրքույկների շնորհանդեսի և ցուցահանդեսի միջոցառումը:
ՈւԱԳՏ	- Վերահսկում է ուսուցչի կողմից կիսամյակի վերջում կազմակերպած նկարազարդ գրքույկների շնորհանդեսը և ցուցահանդեսը:
Մ/Մ նախ.	- Լավագույն մասնակիցներին խրախուսում և ներկայացնում է տարբեր մակարդակներում կազմակերպվող համապատասխան ստուգատեսներին:
ՄԿԱԳՏ	- Աշխատանք է տանում ծնողների հետ (օրինակ՝ կազմակերպում է միջոցառումներ/նախագծեր՝ «Ընտանեկան ընթերցանություն», «Ընթերցում է ծնողը» և այլն, միջոցառումների ժամանակ որպես ժյուրիի անդամ ներառում է նաև ծնողների):

Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից - ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է գործընթացի բոլոր մասնակիցների հետ: - Կիսամյակի վերջում կազմակերպում է նկարազարդ գրքույկների շնորհանդես և ցուցահանդես:
ԴԱԿ	- Օժանդակելով ուսուցչին՝ կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ: - Կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով:
Գրադարանավար	- Կազմակերպում է գրական խաղեր: - Կազմակերպում է վիկտորինաներ՝ ընթերցված գրքերի շուրջ: - Համագործակցում է ծնողների հետ:
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ: - Աջակցում է ուսուցչին կիսամյակային ցուցահանդեսն իրականացնելու հարցում:

Հունվար	
Տնօրեն	- Հանձնարարում է ՈւԱԳՏ-ին՝ վերահսկել սովորողների ընթերցանության որակի բարձրացման նպատակով ստեղծված ընթերցանության խմբակների գործունեությունը:
ՈւԱԳՏ	- Վերահսկում է ընթերցանության որակի բարձրացման նպատակով ստեղծված ընթերցանության խմբակների գործունեությունը:
Մ/Մ նախ.	- Կազմակերպում է բաց դասեր, ցերեկույթներ՝ հրավիրելով մանկագիրների, ասմունքողների, դերասանների:
ՄԿԱԳՏ	- Տարբեր դասարաններում պլանավորում և կազմակերպում է բաց դասեր՝ կարդալու տարբեր տեսակների կիրառման և կարդալու որակական տարբեր հատկանիշների զարգացման ուղղությամբ փորձը ներկայացնելու նպատակով: - Մեթոդմիավորման նիստի ժամանակ ներկայացնում է աշխատանքների ընթացքն ու արդյունքները:
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից - ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է գործընթացի բոլոր մասնակիցների հետ:
ԴԱԿ	- Կազմակերպում է տարբեր դասարաններում միջոցառումներ,ցերեկույթներ: - Հրավիրում է ծնողներին, տատիկ-պապիկներին՝ մասնակցելու ընթերցանությանը նվիրված միջոցառումներին, մրցույթներին:
Գրադարանավար	- Համագործակցում է Խնկո-Ապոր անվան ազգային մանկական եւ այլ գրադարանների հետ, կազմակերպում այցելություններ գրադարաններ:

Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ, աջակցելով նրան գրադարաններ այցելելու հարցում:
Փետրվար	
Տնօրեն	- Հանձնարարում է ՄԿԱԳ տեղակալին՝ տարրական դպրոցում ստեղծել ընթերցանության «Մարդուկ-կարդուկ» խմբակը:
ՈՒԱԳՏ	- Կազմակերպում է ընթերցանության, ասմունքի, դերային խաղերի մրցույթներ:
Մ/Մ նախ.	- Տարրական դպրոցում ստեղծում է ընթերցանության «Մարդուկ-կարդուկ» խմբակը:
ՄԿԱԳՏ	- Կազմակերպում է համադպրոցական միջոցառում՝ «Գիրք նվիրելու օր» և «Հովի. Թումանյանի ծննդյան օր» խորագրով:
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է ընթերցանության խրախուսման գործընթացի բոլոր մասնակիցների հետ: - Կազմակերպում է կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին:
ԴԱԿ	- Օժանդակելով ուսուցչին՝ իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկում, կազմակերպում է կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին:

Գրադարանավար	- Կազմակերպում է ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, մանկական գրքի ընթերցումներ հեղինակների, դերասանների, համայնքի ներկայացուցիչների, ուսուցիչների կողմից: - Համագործակցում է հրատարակչությունների հետ, կազմակերպում այցելություններ գրախանութներ:
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ: Աջակցում նրան հրատարակչություններ այցելելու հարցում:
Մարտ	
Տնօրեն	- Հանձնարարում է ՈւԱԳ տեղակալին՝ վերահսկել ուսուցչի կողմից - կազմակերպած սովորողների կարդացած գրքի ներկայացման օրվա հետ կապված աշխատանքներին:
ՈւԱԳՏ	- Վերահսկում է ուսուցչի կողմից կազմակերպած սովորողների կարդացած գրքի ներկայացման օրվա հետ կապված աշխատանքները:
Մ/Մ նախ.	- Գրադարանավարի և ուսուցչի հետ միասին կազմակերպում է հանդիպումներ ժամանակակից գրողների հետ:
ՄԿԱԳՏ	
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով:

	- Համագործակցում է ընթերցանության խրախուսման գործընթացի բոլոր մասնակիցների հետ:
ԴԱԿ	Տառուսուցման ավարտից հետո ուսուցչի հետ կազմակերպում է ընթերցանության մրցույթ՝ «Ես արդեն ընթերցող եմ» թեմայով:
Գրադարանավար	
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ:
Ապրիլ	
Տնօրեն	- Հանձնարարում է դպրոցի գրադարանավարին՝ կազմակերպելու գրքի քննարկում՝ համագործակցելով ուսուցչի հետ:
ՈւԱԳՏ	- Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպում է ընթերցանության որակի գնահատման (ձևավորող գնահատման միջոցով) ստուգատեսներ:
Մ/Մ նախ.	- Կազմակերպում է այցելություններ տարբեր հրատարակչություններ և գրախանութներ:
ՄԿԱԳՏ	
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում: - Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան:

	- Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է ընթերցանության խրախուսման գործընթացի բոլոր մասնակիցների հետ: - Կազմակերպում է «Դասը վարում է գրողը» գրական հանդիպում ժամանակակից գրողների հետ:
ԴԱԿ	- ՈՒԱԳՏ-ի հետ կազմակերպում է այցելություններ հրատարակչություններ և գրախանութներ:
Գրադարանավար	
Ծնող	- Տանը կազմակերպում է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար: - Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի: - Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել՝ պատրաստ լինելու ուսուցչի կողմից ընտրված դասին: - Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը: - Համագործակցում է գրադարանավարի հետ:
Մայիս	
Տնօրեն	- Հանձնարարում է ՈՒԱԳ տեղակալին՝ կազմակերպելու տարրական դասարանների միջև ընթերցանության մրցույթ:
ՈՒԱԳՏ	- Կազմակերպում է տարրական դասարանների միջև ընթերցանության մրցույթ: - Վերահսկում է ուսուցիչների կողմից ընթերցանության խրախուսմանն ուղղված աշխատանքների ներառումը «Մայրենի» ուսումնական առարկայի թեմատիկ և օրվա դասի պլանավորման մեջ:
Մ/Մ նախ.	- Կազմակերպում և աջակցում է տարրական դասարանների միջև կազմակերպված ընթերցանության մրցույթին:
ՄԿԱԳՏ	- Կազմակերպում է ընթերցողական կարողությունների ստուգատես, նախ՝ դասարանական, հետո՝ դպրոցական մակարդակով:
Դասվար	- Իրականացնում է ընթերցանության մշտադիտարկում:

	- Իրականացնում է կարդացած գրքերի էջերի ամենօրյա նշման գրքույկի մշտադիտարկումը: - Ամեն ամիս՝ ընտրված դասին, կազմակերպում է կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: - Յուրաքանչյուր ամսվա վերջում ստուգում է ընթերցանության տեխնիկան: - Կազմակերպում է բազմաբնույթ աշխատանքներ, կիրառում է տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցողական որակների բարելավման նպատակով: - Համագործակցում է ընթերցանության խրախուսման գործընթացի բոլոր մասնակիցների հետ: - Կազմակերպում է կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին:
ԴԱԿ	- Համագործակցելով գործընթացի բոլոր մասնակիցների հետ՝ կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ,այդ թվում՝ տողան, որի ընթացքում խրախուսվում են բոլոր լավագույն ընթերցողները՝ սովորողները, ծնողները, մանկավարժները:
Գրադարանավար	- Տարվա վերջում կազամակերպում է կարդացած գրքերի ամփոփում:
Ծնող	- Աջակցում է ուսուցչին բազմաբնույթ աշխատանքների հարցում, որոնց կատարման համար հարկավոր է ծնողի մասնակցությունն ու ներգրավվածությունը:

8. Օգտագործված գրականություն

8.1.1. Մ. Մկրտչյան, Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011, 146 էջ:

8.1.2. Ա. Գալստյան, Ռ. Խարազյան, Լ. Ավագյան, Ա. Բալայան, Ինքնուրույն ընթերցանության նյութեր. 2-րդ դասարան, Էդիթ Պրինտ, Երևան, 2010:

8.1.3. Ա. Գալստյան, Ռ. Խարազյան, Լ. Ավագյան, Ա. Բալայան, Ինքնուրույն ընթերցանության նյութեր. 3-րդ դասարան, Էդիթ Պրինտ, Երևան, 2010:

8.1.4. Ա. Գալստյան, Ռ. Խարազյան, Լ. Ավագյան, Ա. Բալայան, Ինքնուրույն ընթերցանության նյութեր. 2-րդ դասարան, Էդիթ Պրինտ, Երևան, 2012:

8.1.5. Ա. Գալստյան, Ռ. Խարազյան, Լ. Ավագյան, Ա. Բալայան, Գրական ունկնդրում և խոսք, 1-ին դասարան, Էդիթ Պրինտ, Երևան, 2012:

8.1.6. Ա. Բալայան, 200 խաղ դպրոցականների համար: Զանգակ, Երևան, 2017, 112 էջ:

8.1.7. Ռ. Խարազյան, Ա. Բալայան, «Առվակ» ընթերցարան: Ինքնուրույն ընթերցանության նյութեր 2-րդ դասարանի համար: Եր., Հաշ ընդ հաշ փրինթ, 2017:

8.1.8. Ռ. Խարազյան, Ա. Բալայան, «Առվակ» ընթերցարան: Ինքնուրույն ընթերցանության նյութեր 3-րդ դասարանի համար: Եր., Հաշ ընդ հաշ փրինթ, 2017:

8.1.9. Ռ. Խարազյան, Ա. Բալայան, «Առվակ» ընթերցարան: Ինքնուրույն ընթերցանության նյութեր 4-րդ դասարանի համար: Եր., Հաշ ընդ հաշ փրինթ, 2017:

8.2.1. https://urok.1sept.ru/articles/579320

8.2.3.https://moi-universitet.ru/innovatsionnaja-dejatelnost-direktora-v-obnovlenii-upravlenija-shkoloj/

8.2.4.https://shkolala.ru/uchat-v-shkole/literaturnoe-chtenie/kak-nauchit-rebenka-vyirazitelno-chitat/

8.2.5.https://moi-universitet.ru/innovatsionnaja-dejatelnost-direktora-v-obnovlenii-upravlenija-shkoloj/